

ԵՐԱԳՐԵՐ


ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՏԵԽՆԻԿՈՒՄՆԵՐԻ

II ՊՐԱԿ

373
5-98

ՀԽՍՀ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵԵԲԵՎ.ԸՆ

1937



16 MAY 2013

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՏՈՒԹՅԱՆ

MAR 2010

373

5-38

ար

ԾՐԱԳՐԵՐ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՏԵԽՆԻԿՈՒՄՆԵՐԻ

II ՊՐԱԿ

1. ՄԱԹԵՄԱՏԻԿԱ
2. ՓԻԶԻԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ
3. ԽՍՀՄ ՏԵՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՑԵՎ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ
ՅԵՐԿՐՆԵՐԻ ՏԵՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ
4. ՑԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

100/
42269

ԳԵՏԱԿԱՆ ՀՐԱՍԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ 1937



ՄԱԹԵՄԱՏԻԿԱ*)

Բ Ա Ց Ա Տ Ա Կ Ա Ն

Մանկավարժական տեխնիկումների այս ծրագիրը ներկացնում է 1935 թ. ծրագրի վերամշակած փոփոխակը: Այսպիսի վերամշակման անհրաժեշտությունը հետևանք է մանկավարժական տեխնիկումների ուսման պլանի փոփոխության, ըստ վորի մաթեմատիկային հատկացվող ժամերի թիվը 388-ից բարձրացվում է 516-ի (առանց մեթոդիկայի): Այս ավելացումը հասրավորություն տվեց՝ 1) առաջին կուրսում մատնելու թվաբանության տարրական դասընթացի կրկնությունը և 2) ավելի մեծ ժամանակ հատկացնելու դասընթացի այն հատվածների ուսումնասիրությանը, վորոնց ծրագիրը համեմատաբար ավելի ծանրաբեռնված եր նյութով: Դրա համեմատ ել ծրագրի մեջ նյութի վորոշ վերաբշխում է կատարված ըստ առանձին սեմեստրների, վորով ավելի հետևողականություն և ստացվում է ապահովում է մաթեմատիկայի ու մաթեմատիկայի մեթոդիկացին առանձին բաժինների ավելի սերտ կապը: Ազատես, տեսական թվաբանությունը նոր ծրագրի համաձայն սկսվում է 5-րդ սեմեստրում, և այդպիսով թվաբանության մեթոդիկայի դասավանդումն իր ժամանակին համապատասխան տեսական հիմնավորում է ստանում, ինչ վոր տեղի չուներ 1935 թ. ծրագրում, յերբ տեսական թվաբանության դասընթացն սկսվում եր միայն վեցերորդ սեմեստրից: յեռանկյունաչափությունը վերջանում է յերկրորդ կուրսում: Սրանով թեթեանում է յերրորդ կուրսի ծրագրային նյութը. դա հնարավորություն է սալիս ավելի մեծ

* Ռուսերենից թարգմանել և հայերեն թարգմանությունը խմբագրել ե պըոֆ. Ա. Տույանը:

ժամանակ հատկացնելու կրկնողական բնույթ ունեցող աճապիսի խնդիրների լուծմանը, վորոնք ընդդրկում են մաթեմատիկայից անցած բոլոր բաժինները:

Ծրագրային նյութի ծավալը բոլոր բաժինների համար թողնված են նախկինը: Տեսական թվաբանության ծրագրից հանված ե «Մոտավոր հաշվումներ» թեման: Դա հնարավորություն ե տալիս մաքսիմալ ուշադրություն դարձնել անցած դասընթացի լուրացումն ամրապնդելու և խնդիրներ լուծելու կարողությունը մշակելու վրա:

Մաթեմատիկայի առանձին բաժինների համար ծրագրում նախատեսնվում ե ժամերի հետևյալ քանակը (տես 4-6 եջերի աղյուսակը):

Խնչպես յերեսում ե նյութի ստորև տված բաշխումից, յուրաքանչյուր սեմեստրում, բացի առաջնից, յերկրորդից և վեցերորդից, միաժամանակ և զուգահեռաբար անցնում են մաթեմատիկայի յերկու բաժինն, իսկ առաջին, յերկրորդ և վեցերորդ սեմեստրում յերեք բաժին (թվաբանություն, հանրահաշվի և յերկրաչափություն), վորը սակայն չպետք ե գժվարացնի ուսանողներին, վորովհետև առաջին և յերկրորդ սեմեստրներում թվաբանության դասընթացի և վեցերորդ սեմեստրներում հանրահաշվի դասընթացի հիմնական խնդիրն այն և լինելու, վորուսանողները կրկնեն իրենց նախապես անցած նյութը:

Ժամերի թիվը ըստ սեմեստրների						
1	2	3	4	5	6	
20	22	20	23	20	20	ընդունակ
1. Թվաբանություն ա) տարրական դասընթացի կրկնություն բ) տեսական թվաբան.	40	22	—	—	—	62
2. Հանրահաշվի	40	55	40	22	—	70
3. Յերկրաչափություն	20	33	—	—	40	34
4. Յեսանկյունաչափություն	—	—	40	44	—	84
Ընդամենը	100	110	80	66	80	516

Տեխնիկումի դասատախտակում անպայման պետք ե նշվի, թե ավալ որն ինչ բաժին ե ուսումնասիրվում (թվաբանություն, հանրահաշվի, յերկրաչափություն): Կամ յետանկյունաչափություն), Մի քանի մանկ. տեխնիկումներում գործածություն գտած՝ նյութի անցման կոնվեյեր սիստեմը, յերբ առավել կամ նվազ տեղությամբ ժամանակի ընթացքում ուսումնասիրվում եր մաթեմատիկական առարկաներից միայն մեկը, պետք ե վճռականապես դեն շպրտել, վորովհետև նա չի ապահովում լուրացման բավականաչափ բարձր վորակ. ավանդումն այդ ձևով կազմակերպելու դեպքում խախտվում ե դասընթացի անցման սիստեմը և հնարավոր չի լինում իր ժամանակին խորացնելու և զարգացնելու այս կամ այն գիտանքները և ունակությունները, վոր տալիս ե մաթեմատիկայի այս կամ այն բաժինը, կիրառելով այդ գիտանքները և ունակությունները հարակից առարկայի համապատասխան թեմաների վրա վարժությունների պրոցեսում, որինակի համար, համեմատությունների տեսության ոգտագործումը, յերբ յերկրաչափությունից անցնում են համեմատական հատվածները և պատկերների նմանությունը. լոգարիթմների ոգտագործումը յերկրաչափության հետևյալ թեման անցնելիս, «Ուղղանկյունն և խոտորանկյունն յեռանկյունների լուծումը». քառակուսի հավասարումների ոգտագործումը յերկրաչափությունից ինդիրներ լուծելիս և այլն:

Ներկա ծրագրի մեջ մաթեմատիկայի բոլոր բաժինների ուսման նյութը յուրաքանչյուր սեմեստրի համար պլանավորված ե այս հնարավորությունն ապահովելու տեսանկյունով, յեթե միայն դրանով չի խախտվել մաթեմատիկայի առանձին դասընթացի նյութի դասավորության սիստեմը:

Առաջին և յերկրորդ սեմեստրների ծրագրի մեջ մտցրած ե թվաբանության սիստեմատիկ դասընթացը: Նրա նպատակն ե լիովին վերացնել այն բոլոր բացերը, վոր ունեն մանկավարժական տեխնիկումների ուսանողները վոչ լրիվ միջնակարգ դպրոցի դասընթացից: Թվաբանությունը կրկնելիս մանկավարժական տեխնիկումի դասատուն պետք ե ձգտի այն բանին, վոր 1) ուսանողները կարողանան ճշգրտորեն ձեակերպել հիմնավորել և գիտակցաբար կիրառել թվաբանության բոլոր կանոնները, 2) վոր յուրաքանչյուր ուսանող սովորի ազատ, ուղիղ և սացիոնալ կերպով լուծել որինակներ և խնդիրներ թվաբանության բոլոր բաժինների վերաբերյալ և հարկավոր չափով տիրապետի

արագ բանավոր հաշվի յեղաններին (պրիոմներին): Անհրաժեշտ ե ընդգծել վոր վարժություններ և հատկապես թվաբանական խնդիրներ լուծելու ունակությունների զարգացումն առաջին կուրսում թվաբանությունից կատարվող աշխատանքի կարեռը արգույն խնդիրն ե հանդիսանում:

	Ժամանակի բաշխումը
I սեմեստր	
ԹՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ (40 ժամ)	
3 արբական դասընթացի կրկնություն՝	
1) Ամբողջ թվերի թվարկություն՝	4
2) Զորս թվաբանական գործողությունների հիմնական հատկությունները և ամբողջ թվերով չորս գործողությունների վերաբերյալ խնդիրների լուծում՝	8
3) Անվանական թվերը և նրանց հետ կատարվող բոլոր գործողությունների վերաբերյալ խնդիրները՝	6
4) Թվերի բաժանականությունը՝	5
5) Հասարակ և տասնորդական կոտորակները Հասարակ և տասնորդական (վերացական ու անվանական) կոտորակները նկատմամբ կատարվող բոլոր գործողությունների վերաբերյալ որինակների և խնդրների լուծում՝	17
ՀԱՆՐԱՀ ՇԻՎ (40 ժամ)	
Նույնական ձևափոխություններ աստիճանների ու արժատաների նկատմամբ՝	22
Քառակուսի հավասարությունը՝	18
ԵԵՐԿՐՄԱԳԱՓՈՒԹՅՈՒՆ (20 ժամ)	
Համեմատական հատկաներ և պատկերների նմանությունը Զափական անչություններ ուղղանկյուն և խոտորանկյուն յեռանկյունների միջև՝	6
Ընդամենը 1-ին սեմեստրում	100

II սեմեստր

ԹՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ (22 ժամ)

Տարբական դասընթացի կրկնություն՝	
1) Հարաբերություններ և համեմատական մեծությունների վերաբերյալ	7
2) Խնդիրներ համեմատական մեծությունների վերաբերյալ	15
ՀԱՆՐԱՀ ՇԱՇԻՎ (55 ժամ)	
Թառակուսի հավասարություն (վերջ)՝	10
Ֆունկցիաներ և նրանց դրաֆիկները՝	11
Իռուացիոնալ հավասարություն թարմական հավա-	

Ժամանակի բաշխումը	16
ապրությունը, վարոնք բերվում են քառակուսի հավասարությունների; Յերկրորդ աստիճանի հավասարությունների սխտեմներ Անհավասարություններ	4
Առաջապելություններ	14
ԵԵՐԿՐՄԱԳԱՓՈՒԹՅՈՒՆ (33 ժամ)	
Զափական առնչություններ յեռանկյան մեջ (վերջ) և համեմատական գծեր շրջանի մեջ՝	8
Ներգծյալ և արտագծյալ բազմանկյուններ	3
Կանոնավոր բազմանկյուններ	12
Հիմնական գաղափարներ սահմանների մասին, շրջանագծի յերկարության և շրջանի մակերեսի վորոշումը	10
Ընդամենը 2-րդ սեմեստրում	110
III սեմեստր	
ՀԱՆՐԱՀ ՇԻՎ (40 ժամ)	
Ցուցչային և լոդարիթմական փունկցիաներ	20
Հաշվություններ լոդարիթմաների ոգնությամբ և խնդիրներ բարդ տոկոնների վերաբերյալ	10
Ցուցչային հավասարություններ	10
ԵԵՐԿՐՄԱԳԱՓՈՒՆԱՋԱՓՈՒԹՅՈՒՆ (40 ժամ)	
Սուր անկյան յեռանկյունաչափական փունկցիաները՝ 900-ից մինչև 3600-ի, 3600-ից մեծ անկյունների և բացասական անկյունների յեռանկյունաչափական փունկցիաներն ու նրանց վերածումը պարզագույն տրգումնութիւն՝ Անկյունների գումարի և տարբերության, կրկնակի անկյան և կես անկյան սինուսի, կոսինուսի և տանգենսի արտահայտությունը՝	10
Արտահայտությունները լոդարիթմելու համար հարմար տեսքի բերելը	6
Եեռանկյունաչափական հավասարություններ	6
Ընդամենը 3-րդ սեմեստրում	80
IV սեմեստր	
ՀԱՆՐԱՀ ՇԻՎ (22 ժամ)	
Լոդարիթմական հավասարություններ	8
Միացությունների տեսությունը և նյուտոնի յերկանդամը Դասընթացի կրկնություն և խնդիրների լուծում հանրահաշվի բոլոր բաժինների վերաբերյալ	12
	7

Ժամանակի բաշխումը	Ժամանակի բաշխումը
ՏԵՍԱԿԱՆ ԹՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ (44 ժամ)	ՏԵՍԱԿԱՆ ԹՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ (30 ժամ)
Ցեղանկյունաչափական հավասարությունների տողարիթմները — — — — —	Կոտորակների տեսությունը: Հասարակ կոտորակները — — —
Ցեղանկյունաչափական ֆունկցիաների լոդարիթմները — — —	Կոտորակների տեսությունը: Տասնորդական կոտորակները 10
Ուղղանկյունների յեռանկյունների և նրանց վրա հիմնափորփած յերկրաչափական խնդիրների լուծումը լոդարիթմների ոդնությամբ — — — — —	Հարաբերությունների և համեմատությունների տեսությունը և նրա կիրառությունները — — — — — 12
Առնչությունների խոտորանկյան յեռանկյունների տարրերի միջեւ — — —	Ընդամենը Ծ-րդ սեմեստրում 80
Խոտորանկյան յեռանկյունների և նրանց վրա հիմնված յերկրաչափական խնդիրների լուծումը լոդարիթմների ոդնությամբ և յեռանկյունաչափությունից անցած վողջ դասընթացի կրկնությունը — — — — —	6
Ընդամենը Ծ-րդ սեմեստրում 66	Հանրագումարը — — — — — 516
V սեմեստր	
ՑԵՐԿՎԱԾԱՓՈՒԹՅՈՒՆ (40 ժամ)	
Տարածաչփության ներածությունը՝ ուղղների և հարթություններ՝ փոխափառձ զեւքը առածության սեղ բասմանը ստումներ — — —	18
	22
ՏԵՍԱԿԱՆ ԹՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ (40 ժամ)	
Տեսական թվաբանության դասընթացի ներածությունը՝ Բնական թվի գաղափարը: Թվերի բնական շարքը և նրա հատկությունները: Թվարկության տասնորդական և այլ սխտեմները — — — — —	6
Ամբողջ թվերով չորս թվաբանական գործողությունների տեսական հիմնավորությունը ու որենքները — — —	18
Բաժանականության տեսությունը և ամբողջ թվերի լնդհանուր բաժանարաները — — —	8
Դարպագի թվերի տեսությունը — — — — —	8
Ընդամենը Ծ-րդ սեմեստրում 80	
VI սեմեստր	
ՀԱՆՐԱՀԱՇԻՎ (16 ժամ)	
Անցած տեսական դասընթացի կրկնություն և խնդիրների լուծում հանրահաշվի բոլոր բաժինների վերաբերյալ —	16
ՑԵՐԿՎԱԾԱՓՈՒԹՅՈՒՆ (34 ժամ)	
Կյոր մարմիններ — — — — —	16
Տեսական դասընթացի կրկնություն և առածածաչփական խնդիրների լուծում յեռանկյունաչափության կիրառությամբ — — —	18

յեթ, Ալդ ժամանակ ուշադրություն եւ դարձվում այնպիսի որին նակնիրի ընտրության վրա, վորոնց մեջ նախատեսնված զեղչքերում ուսանողների կատարած սխալները մասսայական են (որինակ, յերբ քանորդը մեջ տեղերում զերո յեւ պարունակում և այլն):

Վոչ լրիվ միջնակարգ դպրոց ավարտածների թվաբանական խնդիրները լուծելու ուսակությունը մեծ մասամբ անբավարար եւ Այս պատճառով այդ ուսակությունը զարգացնելու վրա մանկավարժական տեխնիկումում պետք եւ մեծ ուշադրություն դարձնել: Նախքան խնդրի լուծման անցնելը պետք եւ բացատրել ուսանողներին, թե վորն եւ պարզ խնդիրը կոչվում և վորը՝ բարդ, թե ինչ պարզ խնդիրներ են կապված յուրաքանչյուր գործողության հետ, և մի շարք խնդիրների վրա պարզաբանել խնդրի վերլուծման անալիտիկ և սինթետիկ մեթոդները, սովորեցնել ուսանողներին կազմել խնդրի լուծման պլանը: Կարենոր ենակ ձգտել հասնելու այն բանին, վոր թվաբանությունը կըրկնելով, ուսանողը հստակորեն ըմբռնի և յուրացնի, թե վոր խնդիրների լուծման ժամանակ կարելի յեւ կիրառել այս կամ այն թվաբանական գործողությունը:

Խնչածն փորձը ցույց եւ ատլիս, տեխնիկում ընդունվողները թույլ են լուծում այն խնդիրները, վորոնք վերաբերում են անվանական թվերով գործողություններին, հատկապես ժամանակը հաշվելուն: Այս պատճառով պետք եւ տեխնիկումի 1-ին կուրսում բավական թվով այդպիսի խնդիրներ լուծել:

Խնդիրների ընտրության ժամանակ անհրաժեշտ եւ նպատակ էնել ուսանողներին ծանոթացնել զանազան տիպի խնդիրների լուծման յեղաններին և այնպես անել, վոր 2-րդ կուրս փոխադրված ուսանողը կարողանա լուծել ցանկացած տիպի թվաբանական խնդիրները և վոչ մի դժվարություն չզգա այնպիսի տիպերի խնդիրների լուծման և բացատրության ժամանակ, վորոնք հանդիպում են տարբական դպրոցի բոլոր դասարանների աշխատանքի պրակտիկայում:

Այս տեսակետից 1-ին կուրսի թվաբանության դասատվի պարտականությունն եւ ուսանողներին նախապատրաստել թվաբանության մեթոդիկայի դասընթացի մշակման և դպրոցում ունենալիք նրանց գործնական պարապմունքների համար:

Ինչպես թվաբանությունից, այնպես ել հանրահաշվից ու լերկրաչափությունից խնդիրներ լուծելիս հատուկ ուշադրություն պետք եւ դարձվի, վոր ուսանողների մեջ ունակություններ մշակվեն խնդրի լուծման պլանը կազմելու, խնդրի պայմանը գրառելու, հաջումները կանոնավոր դասավորելու, թե՛ տեսրակում և թե՛ գրատախտակի վրա պարզորոշ և գեղեցիկ ձևով գորելու, խնդրի լուծման ընթացքը գրավոր ու բանավոր ձևով համառոտ, բայց հասկանալի, հստակ և բավականաչափ լրիվ բացատրելու: Դրա համար անհրաժեշտ ե, վոր ուսանողները սիստեմատիկորեն խնդիրներ լուծեն, տալով նաև բացատրությունները:

Վեցերորդ սեմեստրում տրվում են հատուկ բաժիններ յերկրաչափությունից «Յերկրաչափական խնդիրների լուծումը» յեռանկյունաչափության կիրառությմար և տեսության կրկնությունը», իսկ հանրահաշվից՝ «Հանրահաշվի դասընթացի բոլոր բաժինների վերաբերյալ խնդիրների լուծումը և տեսության կրկնությունը»: Նույնպիսի թեմա պետք եւ անցնել նաև չորրորդ սեմեստրում: Այս բաժինները մտցնելու նպատակն այն ե, վոր հնարավորություն տրվի ուսանողների մեջ ունակություններ մշակելու՝ կիրառել մաթեմատիկական գիտանքների ամբողջությունը խնդիրներ լուծելու վրա և միաժամանակ այդ կապեցւթյամբ կրկնելու անցած վողջ դասընթացը: Պետք եւ ընդգծել, վոր այդ բաժինները մտցնելը չի բացասում, այլ ընդհակառակը, յեռթագրում ե, վոր նաև լերկրաչափության յեռակյունաչափության և հանրահաշվի դասընթացներն անցնելիս պետք եւ լուծվեն անյպիսի խնդիրներ, վորոնք հնարավորություն են տալիս ուսանողներին զարժիշտելու մաթեմատիկական գիտելիքների ամբողջության մեջ:

Մաթեմատիկական հաշվումների և ձևափոխումների ունակություններ զարգացնելը, ինչպես վերը նշեցինք, հանդիսանում ե մաթեմատիկական կազմակերպությունը ամենազդիլսավոր խնդիրներից մեջը: Այս խնդիրը կարող եւ հաջող լուծում ստանալ միայն այն դեպքում, յեթե ուսանողը մանկավարժական տեխնիկումում մաթեմատիկական լուրաքանչյուր բաժնի վերաբերյալ բավարար թվով այնպիսի որինակներ և խնդիրներ եւ լուծում, վորոնք ընտրված են վորոշ սիստեմով ըստ աճող դժվարացրության և բարդության: Որինակները և խնդիրները պետք եւ լուծվեն թե դասարանի հետ տեղի ունեցող պարապմունքների

ընթացքում և թե տնային աշխատանքի ժամանակ։ Պրակտիկան ցույց ե տալիս, վոր կարելի յե աշխատանքի լուրաքանչյուր մեկ ժամի համար խնդիրների հետևյալ մատավոր նվազագույն նորման սահմանել՝ 1) դասարանական պարապմունքների համար միջին հաշվով 2 որինակ ու խնդիր, ընդամենը 3 տարվա ընթացքում 1000 որինակ և խնդիր, 2) 1-ին, 2-րդ և 3-րդ սեմեստրներում տնային աշխատանքի համար միջին հաշվով 4 որինակ ու խնդիր, իսկ 4-րդ, 5-րդ և 6-րդ սեմեստրներում, նկատի ունենալով, վոր խնդիրներն ավելի բարդ են, 3 որինակ ու խնդիր—պարապմունքի մեկ ժամի համար։ Այսպիսով տնային աշխատանքի ընթացքում մաթեմատիկայի բոլոր բաժինների վերաբերյալ պետք է լուծել մոտ 1800 որինակ ու խնդիր։ Յուրաքանչյուր ուսանողի կատարած որինակների ու խնդիրների ընդհանուր միջմունքը դասարանում և տանը 3 տարվա ընթացքում չպետք ե պակաս լինի 2850-ից։ Միայն այս պայմանի դեպքում հնարավոր ե ապահովել մանկավարժական տեխնիկումն ավարտողների մաթեմատիկական տեխնիկայի անհրաժեշտ զարգացումը։

Մաթեմատիկայի բոլոր բաժիններից որինակներ ու խնդիրներ լուծելիս պետք է վարժությունների ընտրության մեջ պահպանել բավականաչափ սխտեմատիկություն և հաջորդականություն։ Ուսանողներին առաջարկվող խնդիրները և որինակները պետք ե իրենց բարդացման աստիճանով բավարար բարձրության հասցվեն։

Մանկավարժական տեխնիկումի ծրագրով 1-ին կուրսում հանրահաշվից անհրաժեշտ ե այնպիսի որինակներ և խնդիրներ ընտրել, վորոնք հնարավորություն տան կրկնելու վոչ լրիվ միջնակարգ դպրոցի ծրագրի մի քանի հիմնական հարցերը։ Այսպես, քառակուսի հավասարումների լուծման վերաբերյալ որինակներում պետք ե տալ բազմանդամ հայտարարներ և տառացին գործակիցներ ունեցող հավասարումներ, վորը կապահովի հանրահաշվական նույնական ձևափոխությունների տեխնիկայի մեջ կրկին ու կրկին վարժություն ձեռք բերելը։

Վորպեսզի ուսանողները հնարավորություն ունենան տեխնիկումի ծրագրի առաջուց մշակած բաժինների վերաբերյալ որինակներ և խնդիրներ լուծելու մեջ շարունակաբար վարժություն ձեռք բերելու, բոլոր կուրսերում անհրաժեշտ և նախ-

լայն տեղ տալ այնպիսի խնդիրների լուծման, վորոնք ուսանողից պահանջում են դասընթացի զանազան բաժինների հետ կապված հարցերի լուծման ուսանկություններ, յերկրորդ՝ պետք ե, իբրև կանոն, ուսանողներին, վորպես տնային աշխատանք, ընթացիկ նյութի վերաբերյալ խնդիրներից և որինակներից զատ տալ մեկից—յերկու որինակ կամ խնդիր դասընթացի առաջուց անցած բաժիններից։ Այդ որինակների և խնդիրների ընտրությունը պետք է կատարել հատուկ խնամքով, վորպեսզի նրանք իրավես հնարավորություն տան ուսանողներին մաքսիմալ թվով կրկնողական վարժություններ անելու մշակած ծրագրի զանազան բաժիններից։

Խնդիրների վրա աշխատանք կատարելու արդյունքն այն պետք է լինի, վոր ուսանողները հստակ պատկերացում ուսունան՝ պարզ և բարդ խնդիրների մասին, բարդ խնդիրների վերլուծման սինթետիկ և անալիտիկ մեջ խնդիրների մասին նրանց տարբերության և միասնության մեջ, խնդիրների թվարանական և հանրահաշվական լուծման մասին։ Մանկավարժական տեխնիկումն ավարտողը պետք է անթերի կերպով կարողանա լուծել այն խնդիրները, վորոնք հանդիպում են տարրական դպրոցի աշխատանքի պահանջական ամսակարգությունների մեջ։ Բացի դրանից, ինչպես արդեն նշեցինք, ուսանողները պետք է իրենց աշխատանքի վերջում տիրապետեն տետրակում և գրատախտակի վրա խնդիր լուծման անալիզը և պահնը գրառելու տեխնիկային, կարողանան խնդրի լուծման ընթացքին զուգընթաց գրավոր և բանավոր սպառիչ բացարձություն տալ և վերջապես կանոնավոր և պարզուց ձևալորել հենց խնդրի լուծումը։

Թվաբանությունից, ինչպես և հանրահաշվից, յերկրաչափությունից և յեռանկյունաչափությունից, հաշվելու վերաբերյալ խնդիրներ ընտրելիս խիստ կարենու և դործնական, կենսական այնպիսի հարցերի լուծման վերաբերյալ խնդիրներ տալ, վորոնք կապված են տեխնիկայի, պոլիտեխնիկայի աշխատանքային ուսուցման, յերկրի պաշտպանության, եկոնոմիկայի, ֆիզիկայի և քիմիայի գասընթացի համապատասխան բաժինների հետ և այլն։ Հատուկ ուշադրություն պետք է դարձնել այնպիսի նյութերի ընտրության վրա, վորն ուսանողներին տալիս և տարրական տեղագրական գրագիտություն և ուղմական գործի գանազան հարցերի վերաբերյալ հաշվարկումներ կատարելու

ունակություններ, իբրև այդպիսի նյութ կարող են ծառայել՝ բարձրությունների և չափման համար անմատչելի հեռավորությունների վորոշումը, հեռավորությունների վորոշումն աչքաշփով, հարգածելի տարածության, հրացանային և գնդացրային կրակի գործունությունը, հանույթի և վերահանուլիթի պարզագույն յեղանները և այլն: Այսպիսի խնդիրները հնարավորություն են տալիս գործնականորեն կիրառելու մաթեմատիկական տեսության ամենաբազմազան բաժինները: Այսպիս, հարգածելի տարածությունը վորոշելու վերաբերյալ խնդիրները պահանջում են իմանալ լոգարիթմումը, յեռանկյունաչափությունը, քառակուսի ֆունկցիան և յեռանկյունների լուծումը:

Վերջապես, ուղմական գործի վերաբերյալ խնդիրների մեծամասնությունը պահանջում է իմանալ համեմատությունների տեսությունը, տոկոսները, պատկերների նմանությունը, մակերեսներ վորոշելը և այլն:

Վեր հանելով գործնական խնդիրների վողջ կարեռությունը, վորչափով նրանք ապահովում են մաթեմատիկական տեսության կապը գործնականի ու ավանդման մյուս առարկաների հետ և միաժամանակ լուծում են կրթական կարգի հարցեր մաթեմատիկայի ավանդման պրոցեսում, պետք են սակայն վճռաբար ընդգծել, վոր այդպիսի խնդիրներով բնավ ինքնանը-պատակ չեն և ոգտագործվում են այս կամ այն մաթեմատիկական դրույթների լավագույն յուրացման ու գիտակցման համար միայն, լիովին յենթարկվելով մաթեմատիկայի դասընթացի սպեցիֆիկ խնդիրներին, Գործնական խնդիրներն իրենց բնույթով սովորաբար շատ բարդ չեն լինում և հանգում են 2--3 հարցի: Այս պատճառով ակներև ե, վոր խնդիրների ճնշող մեծամասնությունը սովորաբար կկրի խնդրագրքի այն փոքր ի շատե բարդ խնդիրների բնույթը, վորոնց նպատակն ե ուսակություններ զարգացնել նրանց լուծման, ինչպես և տեսական դասընթացում անցած համապատասխան թեորեմների, կանոնների և բանաձևերի ոգտագործման մեջ:

Տեսական թվաբանության հիմնական խնդիրը Յ-րդ կուրսում այն ե, վոր ուսանողները լուրացնեն թվաբանության հիմնական հարցերի տեսությունը նրանց խիստ ապացուցումով: Այս դասընթացն անցնելով, ուսանողը հնարավորություն կստանա ավելի լավ գիտակցելու, զարգացնելու և խորացնելու

տարրական դպրոցի թվաբանության առանձին հարցերի դասավանդման մեթոդիկան, այլև ընդլայնելու և խորացնելու հենց թվաբանության բուն դասընթացի տեսական բաղան, թվաբանության, վորն ապագա ուսուցչի համար դասավանդման առարկա յե հանդիսանում:

Հասկանալի յե, վոր այդպիսի դասընթացը միանգամայն անհրաժեշտ և ապագա ուսուցչի պատշաճ մանկավարժական հմտությունն ապահովելու համար: Այս տեսակետից տեսական թվաբանությունը մի դասընթաց ե, վորն անսիջականորեն բղխում և դպրոցական բաժանմունքի սպեցիֆիկ խնդիրներից:

Այս դասընթացն անցնելիս պետք է թե վարժությունները լուծել տեսական թվաբանությունից, վորպես այդպիսուց, և թե կրկնողական բնույթի համակցված խնդիրները թվաբանության բոլոր բաժինների վերաբերյալ:

Յերկրաչափության մեջ, բացի հաշվելու վերաբերյալ խընդիրներից, անհրաժեշտ ե լուծել հակ կառուցման վերաբերյալ տիպիկ վոչ բարդ խնդիրներ:

Անհրաժեշտ ե, վոր ուսանողները մաթեմատիկական ձևավոխումների տեխնիկայի և խնդիրների լուծման մեջ ունակություններ ձեռք բերելուց զատ տիրապետեն նաև թեորեմների տրամաբանական ապացուցման և բանաձևերի արտածման ունակություններին:

Մաթեմատիկական գրույթներն ինչպես յերկրաչափության և յեռանկյունաչափության, այնպես ել հանրահաշվի և տեսական թվաբանության մեջ, պետք ե անպայման ապացուցվեն:

Ընդամեն պետք ե հատուկ ուշադրություն դարձնել, վոր ուսանողի մեջ խոսքի կուլտուրա մշակվի և նա տիրապետի մաթեմատիկական լեզվի յուրահատկություններին:

Նպատակահարմար ե թեորեմներն ապացուցել վոչ միայն բանավոր՝ գրատախտակի մոտ, այլև գրավոր, յերբեմնակի ստուգողական աշխատանքներ առլով, վորոնց նպատակը պետք ե լինի ստուգել ուսանողների տրամաբանորեն մտածելու և դատողությունները հետեղականորեն շարադրելու ունակությունը:

Դասընթացն ըստ ծրագրի ուսումնասիրելու ընթացքում անհրաժեշտ և ուսանողներին համառոտակի հաղորդել մաթեմատիկայի զարգացման կարևորագույն ետապների մասին և ծանոթացնել ամենից ավելի ականավոր գիտական -մաթեմատիկոսների հետ:

Մաթեմատիկայի ուսումնասիրության արդյունքներից մեկն ելայն պետք ե լինի, վոր Յ-ըդ կուրսի ուսանողը պարզ գիտակցի, թե մաթեմատիկայի մաթոդիկայի հիմքը հանդիսանում ե դիմակական մատերիալիզմը: Դրա համար դասընթացն անցնելիս անհրաժեշտ ե՝ ա) կոնկրետ որինակներ բերելով սրել ուսանողների ուշադրությունն այն բանի վրա, վոր մաթեմատիկան աքսիոմները գործնական փորձից են ծագում, վոր գործնական խնդրից (կոնկրետից) են բարձրանում դեպի տեսական ընդհանրացումներն ու մաթեմատիկական որենքները (դեպի աբստրակտը) և նորից վերադառնում գտած որենքների ու արտածումների գործնական կիրառմանը. բ) ուսանողներին լուսաբանել թվի գաղափարի, թվաբանական գործողությունների (գումարման և հանման, բազմապատկման և բաժանման և այլն) նույնության և տարրերության գաղափարի դիմակական գաղափարման հարցերը:

Ուսանողի տնային աշխատանքը մաթեմատիկայից կանոնավոր կազմակերպելու և զեկավարելու հարցը բացառիկ կարելու նշանակություն ունի: Տնային աշխատանքի պրոցեսում ուսանողը պետք է դասի համար տեսական նյութ պատրաստի և խնդիրներ լուծի: Վերը նշվեց, վոր ուսանողը տանը պետք ե մոտ 1850 խնդիր լուծի: Պարզ ե, վոր այդ աշխատանքի արդյունավետությունը լիովին կախված լինի նրանից, թե վոր աստիճանի ուսումնական կազմակերպված այն: Հարկավոր ե, վոր դասատուն ապահովի:

1) Տնային առաջադրությունների ըստ դասի պլանի առկայությունը յուրաքանչյուր անգամ մեկ ամսվա համար, նշելով դասագրքի այն պարագրաֆները, վորոնք պարունակում են մշակելիք նոր և կրկնելիք հին և տեսական նյութը, նշելով այն խնդիրների համարները, վոր ուսանողը պետք է լուծի առաջիկա դասի համար.

2) Ամենորյա հսկողության առկայությունը, վոր ուսանողները տնային աշխատանքները կանոնավորապես կատարեն.

3) Ուսանողների տնային տեսրերի ստուգումը.

4) Ուսանողներին տրված տնային առաջադրությունների կատարման վերաբերյալ պլանային կոնսուլտացիաների կազմակերպումը.

5) Վերջապես, ուսանողներին ուսման տարվա սկզբին ձանոթացնելը մաթեմատիկայից ինքնուրույն տնային աշխատանքը կանոնավոր և ուղինաւ կազմակերպելու մեթոդիկային: Սրապատասխանագույնը լիովին ընկնում ե դասատվի վրա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1) Կիսելև. Ալգեբրա. Սtabильный учебник для средней школы изд. переработанное, в двух частях (կայերեն թարգմանությունը):

2) Գորվից Յ. Յ. և Գանգնու Ռ. Վ. Систематический курс геометрии. Стабильный учебник для средней школы. 1936 г. в двух частях (կայերեն թարգմանությունը):

3) Ռիբկին. Учебник прямолинейной тригонометрии. Стабильный учебник для средней школы (կայերեն թարգմանությունը):

4) Շափոնиков и Вальцов. Сборник алгебраических задач для средней школы. изд. переработанное, 1936 г., в двух частях (կայերեն թարգմանությունը):

5) Ռիբկին. Сборник задач по геометрии для средней школы. В двух частях (планиметрия и стереометрия) (կայերեն թարգմանությունը):

6) Ռիբկին. Сборник задач по тригонометрии для средней школы (կայերեն թարգմանությունը):

7) Պրյեվալյակի. Таблицы логарифмов (կայերեն թարգմանությունը):


8) Վլадимирский. Практические работы по геодезии (инструктивные карточки).

9) Չулиցкий. Арифметика для педтехникумов и рабфаков.

10) Բերեզанская. Сборник задач по арифметике (կայերեն թարգմանությունը):

11) Տրիֆոնов, Шорохов и др. Сборник задач по арифметике для рабфаков.

Այս խնդրագրերը չեն կարող լիովին բավարարել մանկականիկումների պահանջներին. սրանցից զատ կարելի յեզ ոգտագործել նախահեղափոխական շրջանում հրատարակված մի քանի խնդրագրեր են:



Տեսական թվաբանությունից իրրե ոժանդակ գրականություն դաստիվի համար կարելի յե հաճարարել հետևյալ գրքերը:

- 1) Билибин. Теоретическая арифметика (по Бертьяну).
- 2) Глаголев А. Н. Курс теоретической арифметики и сборник теоретических упражнений.
- 3) Кашин. Основания математического анализа. Часть 1: „Учение о числе“.
- 4) Фридман В. Г. Учебник теоретической арифметики.
- 5) Воинов А. Очерк теоретической арифметики.
- 6) Таннери. Курс теоретической и практической арифметики.

Ոժանդակ ձեռնարկներ յեռանկյունաշափուրյան դաստիվի
համար

- 1) Крогиус. Прямолинейная тригонометрия.
 - 2) Шмулевич. Прямолинейная тригонометрия и ее приложения.
- Այս դասագրքերը պարունակում են մեծ քանակով նյութեր, վորոնք տալիս են յեռանկյունաշափության գործնական կիրառությունը տեխնիկայում, մեխանիկայում, ուղղմական գործում և այլն:
- 1) Пеллинен И. П. Элементы военного дела в курсе математики.
 - 2) Пеллинен И. П. Элементы военизации в школьной математике.

Առաջին գիրքը պարունակում է մի շարք գործնական խնդիրներ և վարժություններ թվաբանության, հանրահաշվի, յերկրաչափության և յեռանկյունաշափության զանազան բաժինների վերաբերյալ, կապակցված ուղղմական գործի հետ: Յերկրորդ գիրքը մեթոդական պայմաններ և տալիս, թե ինչպես պետք է անցկացնել ուղղմականացումը թերի միջնակարգ դըպոցի մաթեմատիկայի դասընթացում:

Համակցված խնդիրներ ընտրելու համար դաստիվուն կարող ե ոգտագործել հետևյալ խնդրագրքերը:

- 1) В. М. Ипатов. Сборник алгебраических задач. Повторительный курс средних учебных заведений. Изд. 1913 года.
- 2) Бычков Ф. Сборник примеров и задач, относящихся к курсу элементарной алгебры. Изд. 25-е, 1917 г.
- 3) П. Г. Дзык, Сборник стереометрических задач на комбинации геометрических тел.
- 4) Б. Н. Делоне. О. К. Житомирский. Сборник геометрических задач.

Մաթեմատիկայի պամուրյունից

- 1) Якобсон. Очерк истории точных наук. Изд. „Работник просвещения“, 1928 г.
- 2) Кеджори. История элементарной математики.
- 3) Попов, проф. Очерки по истории математики.
- 4) Цейтен. История математики в древности и в средние века. Гос. технико-теоретическое изд-во, 1922 г.
- 5) Вилейтнер. Хрестоматия по истории математики ГТТИ. Изд. 1932 г., 4 выпуск.

Մաթեմատիկայի մեթոդոգիայի վերաբերյալ հարցերի համար դաստիվուն կարող ե ոգտագործել հետևյալ գրքերը:

- 1) Энгельс. Диалектика природы.
- 2) Сборник „На борьбу за материалистическую диалектику в математике“, составленный секцией математики Коммунистической академии.

ԾՐԱԳԻՐ

I ՍԵՄԵՍՏՐ

ՀԱՆՐԱՀԱՇԻՎ (40 ժամ)

Նույնական ձեվափոխություններ աստիճանների լեվ արմատների մեջ

Աստիճան բարձրացնել, լերը ցուցիչները ամբողջ գրական թվեր և տառեր են: Բացասական թվի զույգ և կենտ աստիճանները: Արտադրյալի, կոտորակի և աստիճանի աստիճան բարձրացնելու վերաբերյալ թեորեմները: Գործողություններ ամբողջ գրական ցուցիչներ ունեցող աստիճանների հետ: Բազմանդամի քառակուսին:

**Արմատ հանելը վորպես աստիճան բարձրացնելու հակա-
դարձ հանրահաշվական գործողություն։ Հարաբերական թվերից
զույգ և կենտ աստիճանների արմատ հանելը։ Գաղափար կեղծ
թվի մասին։ Թվաբանական և հանրահաշվական արմատներ։ Ար-
տադրյալից, կռորակից և աստիճանից արմատ հանելու վերա-
բերյալ թեորեմը։**

Թվերից քառակուսի արմատ հանելը, արմատի տասնավոր-
ների թվի և միավորների թվի հատկությունը։

Մոտավոր արմատներ։ Թեորեմ՝ «Յեթե ամբողջ թվի ուրե-
աստիճանի արմատը չի կարող արտահայտվել ամբողջ թվով,
ապա այն չի կարող արտահայտվել նաև կոտորակով»։

Մոտավոր քառակուսի արմատներ մինչև մեկ միավոր և
մինչև $\frac{1}{n}$ ճշտությամբ և նրանց գտնելու կանոնները։

Գաղափար խոռացիոնալ թվի մասին։ Խոռացիոնալ թվերը
թվային առանցքի վրա։ Խոռացիոնալ թվերի վրա կատարվող
գործողությունների իմաստը։

Արմատի հիմնական հատկությունը։ Արմատացույցի և ար-
մատատական գաղափարության ցուցչի կրծատումը։ Խոռացիոնալ ար-
տահայտություններն ընդհանուր ցուցչի բերելը, արտադրիչ
արմատանշանի տակից դուրս բերելը և արմատանշանի տակ տա-
նելը։ Արմատատական արտահայտությունն ամբողջ տեսքի բերելը։
Արմատի նորմալ տեսքը։ Նման արմատներ և նրանց միացումը։
Գործողություններ խոռացիոնալ թվերի նկատմամբ։ Արմատների
հայտնաբերություններ հայտնաբերություններ տեսքից բաժանումը, աստի-
գումարումը, հանումը, բաղմապատկումը, բաժանումը, աստի-
գումարումը հայտնաբերություններ և արմատից արմատ հանելը։ Կոտորակները
ճան բարձրացնելը և արմատից արմատ հանելը։ Հիմնական գեղ-
քերը։

Քառակուսի հավասարումներ

Քառակուսի հավասար ման նորմալ տեսքը։ Լրիվ և թերի
քառակուսի հավասարումներ։ Թերի քառակուսի հավասարում-
քառակուսի հավասարումներ։ Լրիվ քառակուսի հավասարումը։ Քառակուսի
ների լուծումը։ Լրիվ քառակուսի հավասարումը։ Քառակուսի
հավասարուման արմատների յերեք բանաձևերի արտածումը։
Վիետի թեորեմը քառակուսի հավասարման արմատների հատ-
կության մասին։ Քառակուսի հավասարման կաղմումն արմատ-
ների միջոցով։ Յերկրորդ աստիճանի յեռանդամի վերլուծումը
հեռագայտականների։ Քառակուսի հավասարման արմատների հե-

ռագուառությունը։ Դիսկրիմինանտ։ Իրական և կեղծ, տարրեր և
հավասար արմատներ։ Զանազան խնդիրների լուծման համար
քառակուսի հավասարում կազմելը։

ՅԵՐԿՐԱՋԱՓՈՒԹՅՈՒՆ (20 ժամ)

Համեմատական հատվածներ յեվ պատկերների նմանությունը

ա) Համեմատական հատվածներ։ Ուղղակի և անուղղակի չա-
փում։ Յերկու հատվածների ընդհանուր չափը և նրա գտնելը։
Գաղափար համաչափելի և անհամաչափելի հատվածների մասին։
Հատվածների հարաբերությունը։ Գաղափար համեմատական հատ-
վածների մասին։ Անկյան կողմերը հատող զուգահեռ ուղղողների
հատկությունը։ Փոշի ճառագայթները հատող զուգահեռ ուղղիղ-
ների հատկությունը։ Յեռանկյան ներքին և արտաքին անկյան
կիսողի հատկությունը։ Չորրորդ համեմատական հատվածի կա-
ռուցման և հաշվելու վերաբերյալ խնդիրների լուծում։

բ) Պատկերների նմանությունը։ Գաղափար նման բազման-
կյունների մասին։ Նմանության գործակից։ Յեռանկյունների
նմանության լեմմը։ Յեռանկյունների նմանության հայտանիշ-
ները։ Ուղղանկյունների յեռանկյունների նմանության հայտանիշ-
ները։ Նման յեռանկյունների բարձրությունների և կողմերի հա-
րաբերությունը։ Նման յեռանկյունների կառուցումը։ Նման
բազմանկյուններ և նրանց կառուցումը։ Նմանագիր բազմանկ-
յուններ։ Նմանության կենսարոն։ Նման բազմանկյունների
անկյունագծերի հատկությունը։ Յերկու յեռանկյունների մակե-
րեսների հարաբերությունը, վորոնք ունեն մեկական հավասար
անկյուն։ Նման յեռանկյունների և բազմանկյունների մակերես-
ների հարաբերությունը։ Բաժանման կարիքն, լայնական մասըշ-
տար, կառուցման և հաշվելու վերաբերյալ խնդիրների լուծում։

Զափական առնչություններ յեռանկյան մեջ

Ուղղանկյուն յեռանկյան ուղիղ անկյան գագաթից ներք-
նածկի վրա իջեցրած բարձրության հատկությունները։ Եղերի
հատկությունը։ Յերկու հատվածների միջին համեմատականի
կառուցումը։ Պյութագորի թեորեմը։

Յեռանկյան մակերեսը անկյան կամ բութ անկյան գիմաց
գտնվող կողմի կախումը մյուս յերկու կողմերից և սրանցից
մեկի պրոյեկցիայից մյուսի վրա։ Խնդիրների լուծում։

II ՍԵՄԵՆՏՐ

ՀԱՆՐԱՀԱՇԻՎ (55 Ժամ)

Քառակուսի հավասարումների կազմումն ըստ խնդրի պայմանների և նրանց լուծումը: Համառոտ տեղեկություններ քառակուսի հավասարումների պատմությունից:

Ֆունկցիաներ յեվ նրանց գրաֆիկները

Գծային ֆունկցիա: Հաստատուն և փոփոխական մեծություններ: Ֆունկցիա: Ֆունկցիայի արգումենտը: Ֆունկցիաների տեսակները: Ֆունկցիոնալ կախման արտահայտության յերի տեսակները: Ֆունկցիոնալ կախման արտահայտության յերեք տեսակները՝ աղյուսակային, անալիտիկական և գրաֆիկական:

Կոորդինատների մեթոդը: Կետի զիրքը հարթության վրա: Կետը գտնելը, յերբ նրա կոորդինատները տված են զանազան քառորդներում:

Եմպիրիկ ֆունկցիաներ՝ եմպիրիկ գրաֆիկների կառուցումը եմպիրիկ ֆունկցիաների գրաֆիկների կառուցումը և լիճակագրական նյութերով: Ինչպես կառողացիա և եքստրապոլացիա գրաֆիկի միջոցով: Ուղիղ համատականություն և նրա արտահայտությունը բանաձեռվէ: Համեմատականության գործակից: Ուղիղ համեմատական կախման գրաֆիկը: Անկյունային գործակից: Հակադարձ համեմատական կախման գրաֆիկը: Պարամետրի յերկրաչափական նշանակությունը:

$y = kx \pm b$ գծային ֆունկցիան և նրա գրաֆիկը: k և b պարամետրների յերկրաչափական նշանակությունը:

$y = kx \pm b$ ուղիղի կառուցումը յերկու կետերի միջոցով: Միանհայտ առաջին աստիճանի հավասարումների գրաֆիկական լուծումը: Յերկանհայտ առաջին աստիճանի յերկու հավասարումների սխտեմի գրաֆիկական լուծումը:

Քառակուսի ֆունկցիա: Յերկրորդ աստիճանի հետեւալ տեսքի ֆունկցիաների գրաֆիկները՝

- 1) $y = x^2$
- 2) $y = ax^2$
- 3) $y = ax^2 + c$
- 4) $y = a(x+m)^2$
- 5) $y = ax^2 + bx + c$

Քառակուսի ֆունկցիայի արմատները և նրանց յերկրաչափական իմաստը: Քառակուսի հավասարման գրաֆիկական լուծումը: Քառակուսի հավասարումների հետազոտությունը: Համառոտ տեղեկություններ ֆունկցիոնալ կախման գրաֆիկական արտահայտության պատմությունից: Խռովացիոնալ հավասարումների բերվադը բարձր ասինաների հավասարումներ: Յերկրորդ ասինաների հավասարումների սիստեմներ

Խռովացիոնալ հավասարումները և նրանց լուծումը: Ստացված արմատների փորձարկումը: Կողմանակի արմատներ, վորոնք ստացվում են իռացիոնալ հավասարումը լուծելիս: Բիկվադրատ (բիրկքառակուսի) հավասարումներ: Անդրագարձ հավասարումներ: Պարզագույն յերկանգամ հավասարումներ: Բարձր աստիճանների վոչ բարդ հավասարումներ, վորոնք բերվում են քառակուսի հավասարումների՝ ձախ մասը բազմապատկեցների վերածելու միջոցով:

Յերկանհայտ յերկրորդ աստիճանի հավասարումների սխեմը: Յերկու հավասարումների սխեմ, վորոնցից մեկն առաջին աստիճանի յե, իսկ մյուս՝ յերկրորդ:

Յերկրորդ աստիճանի յերկու հավասարումների սխեմը: Քառակուսի հավասարումների սխեմ, վորոնք լուծում են հատուկ յեղանակով:

- 1) $x - y = a; xy = b$
- 2) $x^2 + y^2 = a; x \pm y = b$
- 3) $x^2 \pm y^2 = a; xy = b$

Անհավասարություններ

Գրագրար առաջին աստիճանի անհավասարության մասին: Անհավասարության հիմնական հատկությունները: Հավասարագոր անհավասարություններ: Յերեք թերեմ հավասարագոր անհավասարությունների մասին: Անհավասարության ապացուցումը: Միանհայտ առաջին աստիճանի անհավասարության լուծումը: Միանհայտ առաջին աստիճանի յերկու անհավասարություններ:

Առաջավորյուններ (պրոգրեսիվներ)

Թվաբանական առաջատարվորյուն: Առաջատարվության ընդհանուր անդամի վորոշումը: Ծայրանգամներից հավասարահետ յերկու անդամների գումարի հատկությունը: Թվաբանական առաջատարվության բոլոր անդամների գումարը:

Յերկրաշափական տռաջաւմուրյուն։ Առաջատվության ընդհանուր անդամի վորոշումը։ Յերկրաչափական առաջատվության բոլոր անդամների գումարը։

Անվերջ յերկրաշափական տռաջաւմուրյուն։ Անվերջ աճող և անվերջ նվազող յերկրաչափական առաջատվության անդամների հատկությունը շարքի սկզբից բավականաչափ հեռանալու գեղքում։ Անվերջ նվազող յերկրաչափական առաջատվության անդամների գումարից բացարձակ մեծությունը։ Պարբերական կոդամական առաջատվության անդամների գումարի բացարձակ մեծությունը։ Պարբերական կոդամական առաջատվության անդամները և նրանց ճշգրիտ մեծության վորոշումը։

ՅԵՐԿՐԱՋԱՌՈՒԹՅՈՒՆ (33 ժամ)

Զափական առնչուրյուններ յեռանկյան մեջ (վերջ) յեզ համեմատական գծերը ըրջանի մեջ

Չուգանեռագծի անկյունագծերի քառակուսիների գումարը։ Յեռանկյան միջնագծերի և բարձրությունների հաշվումը յերեք կողմերով։ Հերոնի բանաձեռ։ Համեմատական հատվածներ շրջանի մեջ, Հատվածի բաժանումն արտաքին և միջին հարաբերությամբ և վոսկի բաժանում։

Ներգծյալ յեզ արտագծյալ բազմանյուններ յեզ նրանց հատկուրյունները ները

Գաղափար ներգծյալ և արտագծյալ բազմանկյունների մասին։ Ներգծյալ յեռանկյուն և արտագծյալ յեռանկյուն։ Ներգծյալ գծյալ քառանկյան անկյունների հատկությունը։ Արտագծյալ քառանկյան կողմերի հատկությունը։ Կախումը յեռանկյան մակերեսի, նրա կիսապարագծի և արտագծի շրջանագծի շառավղի միջև։ Ներգծյալ շրջանագծի և արտագծյալ շրջանագծի շառավղի վորոշումը։

Կանոնավոր բազմանկյուններ

Կանոնավոր բազմանկյունների ընդհանուր հատկությունները։ Կանոնավոր ներգծյալ և արտագծյալ բազմանկյունների կառուցումը։ Կանոնավոր նույնանուն բազմանկյունների կողմերի և պարագծերի հարաբերությունը։

Կանոնավոր բազմանկյան մակերեսը, Կանոնավոր ներգծյալ և արտագծյալ բազմանկյունների մակերեսները, Կանոնավոր նույնանուն բազմանկյունների մակերեսների հարաբերությունը, Շրջանի մեջ ներգծած քառակուսու, կանոնավոր վեցանկյան ու կանոնավոր յեռանկյան կառուցումը և նրանց կողմերի վորոշումը շառավղի միջոցով։

Կանոնավոր ներգծյալ տասնանկյան կողմի վորոշումը։ Կանոնավոր յեռանկյան շուրջն արտագծած և մեջը ներգծած շրջանագծի շառավղի արտահայտությունը յեռանկյան կողմի միջոցով։ Կանոնավոր յեռանկյան բարձրության և մակերեսի արտահայտությունը նրա կողմի միջոցով։ Արտագծած քառակուսու ու կանոնավոր արտագծած յեռանկյան կառուցումը և նրանց արտահայտությունը շառավղի միջոցով։

Կանոնավոր արտագծած բազմանկյան կողմի հաշվումը նույնանուն կանոնավոր ներգծած բազմանկյան կողմի և շառավղի միջոցով։

Կանոնավոր ներգծած բազմանկյան կողմերի թվի կրկնապատկման բանաձեռ։

Հիմնական գաղտփարներ սահմանների մասին, ըրջանագծի յերկարույթ յեզ ըրջանի մակերեսի վորոշումը

Գաղափար անվերջ մեծ, անվերջ փոքր փոփոխական մեծությունների և նրանց հիմնական հատկությունների մասին։ Սահմանի ձգտող մեծություններ։ Սահմանների հիմնական հատկություններ։ Շրջանագիծը վորպես սահման կանոնավոր ներգծած և արտագծած բազմանկյունների պարագծերի, յերեսանց կողմերի թիվը անսահմանափակորեն մեծանում ե։ Շրջանագծերի յերկարությունների հարաբերությունը։ Շրջանագծի յերկարության հարաբերությունն իւ տրամագծին։

Ո թիվը։ Ո սատիճանի աղեղի յերկարությունը։ Շրջանի մակերեսը վորպես սահման կանոնավոր ներգծած ու արտագծած բազմանկյունների մակերեսների, յերբ նրանց կողմերի թիվը սահմանափակորեն մեծանում ե։ Շրջանի մակերեսի վերաբերյալ թերեմը։ Շրջանների մակերեսների հարաբերությունը։ Սեկտորի (արտատի) մակերեսը։ Սեկտորի (բացատի) մակերեսը։ Հիմնական համառոտ տեղեկություններ յերկրաչափության պատմությունից։

III ՍԵՎԵՍՏՐ

ՀԱՆՐԱՀԱՇԵՒՐ (40 ժամ)

Յուցային յեզ լոգարիթմական ֆունկցիաներ

Յուցչի գաղափարի ընդհանրացումը։ Ամբողջ գրական ցուցիչներ, ամբողջ բացասական ցուցիչներ և գործողություններ նրանց նկատմամբ։ Կոտորակային ցուցիչներ և գործողություններ նրանց նկատմամբ։ Զերո ցուցիչ։ Յուցչային ֆունկցիայի գաղափարը։ Յուցչային ֆունկցիայի գրաՓիկը։

Հոգարիթմներ: Հոգարիթմի և լոգարիթմական ֆունկցիայի դադարքափարզ: Հոգարիթմական ֆունկցիայի գրաֆիկը: Հոգարիթմական ֆունկցիայի հատկությունները: Արտադրյալի, կոտորակի, աստիճանի և արմատի լոգարիթմները: Համրահաշվական արտահայտությունների լոգարիթմումը: Տասնորդական լոգարիթմներ և նրանց հատկությունները: Տասնորդական քառանիշ և հնգանիշ լոգարիթմների աղյուսակների կազմությունը: Աղյուսակներից ոգտվելը լոգարիթմելու և պոտենցիալու (աստիճաննելու) համար: Գործողություններ բացասական քարակտերիստիկներով լոգութիթմների նկատմամբ: Հոգարիթմների ոգնությամբ հաշվումներ կատարելու վերաբերյալ որինակներ լուծելու:

Հաշվողական աշխատանքի մեջենայացումը՝ լոգարիթմական աղյուսակներ և լոգարիթմական քանոն (ծանոթացնել նրանց կազմությանը):

Համառոտ տեղեկություններ լոգարիթմների պատմությունից:

Հաշվումներ լոգարիթմների ոգնությամբ յեվ խնդիրներ բարդ տոկությունից վերաբերյալ

Հոգարիթմների միջոցով հաշվել անմիջորեն լոգարիթմելի արտահայտությունները, այլ և այն արտահայտությունները, վորոնք պարունակում են բացասական թվեր, գումար կամ տարբերություն (մասերով լոգարիթմում): Բարդ տոկումներ, ժամկետային վճարումներ և մուծումներ:

Յուցային հավասարումներ

Գաղափար ցուցչային հավասարումների մասին: Յուցչային հավասարումներն աղյուսակների ոգնությամբ, ինչպես և առանց աղյուսակների ոգնությամբ լուծելու հիմնական յեղանակը՝ 1) հիմքերի հավասարեցման յեղանակ, 2) Փակագից դուրս բերելու յեղանակ, 3) Ոժանդակ անհայտի մուծման յեղանակ, 4) Հոգարիթմելու յեղանակ:

ՅԵՐԱՆԿՑՈՒՆԱՉԱՓՈՒԹՅՈՒՆ (40 ժամ)

Սուր տեղյան յեռանկյունաշափական ֆունկցիաները

Յեռանկյունաշափառթյան առարկան: Գաղափար անկյունների և աղեղների ուղիղանացին չափման մասին: Աստիճանային չափումից ուղիղանացին չափման անցնելու բանաձևեր և ընդ-

հակառակը: Յեռանկյունաշափական ֆունկցիաների փոփոխությունը, յերբ անկյունը փոփոխվում և 0° -ից մինչև 90° :

Սուր անկյան կառուցումը, յերբ տված և նրա ֆունկցիան: Կախումը միենույն անկյան յեռանկյունաշափական ֆունկցիաների միջև: Լրացուցիչ անկյուններ և կախումը նրանց յեռանկյունաշափական ֆունկցիաների միջև: Յուղանկյունների միջև: Կախումն ուղղանկյունն յեռանկյան կողմերի և անկյունների միջև: Ուղղանկյունների լուծումը բնական յեռանկյունաշափական ֆունկցիաների աղյուսակների ոգնությամբ: Յերկրաշափական պատկերների միջին տարբերի հաշվումը յեռանկյունաշափական ֆունկցիաների ոգնությամբ՝ կանոնավոր բազմանկյան կողմից, յեռանկյան մակերեսի, կանոնավոր ու-անելյան մակերեսի հաշվումը:

90° -ից մինչև 360° -ի, 360° -ից մեծ յեվ բացասական անկյունների յեռանկյունաշափական ֆունկցիաների համար:

Յեռանկյունաշափական զծերի կառուցումը և ֆունկցիաների կազմումը 2-րդ, 3-րդ և 4-րդ քառորդների անկյունների համար:

Անկյան կառուցումը տված յեռանկյունաշափական ֆունկցիայով: Յուրաքանչյուր քառորդի անկյունների յեռանկյունաշափական ֆունկցիաների միջև գոյություն ունեցող կախման բանաձևերը: Յեռանկյունաշափական ֆունկցիաների փոփոխությունը, յերբ անկյունն աճում և 0° -ից մինչև 360° : Վերածման բանաձևեր: Անկյան հաշվումը յեռանկյունաշափական ֆունկցիայի տվյալ արժեքով: Բացասական անկյունները: 360° -ից մեծ անկյունները: Յեռանկյունաշափական ֆունկցիաների պարբերականությունը: Ամեն մի անկյան յեռանկյունաշափական ֆունկցիաների վերածումը պարզագույն արգումենտի: Այն աղեղների ընդհանուր տեսքը, վորոնց վերջնակետը գտնվում և շրջադիր տվյալ կետում. այն անկյունների ընդհանուր տեսքը, վորոնք համապատասխան են յեռանկյունաշափական ֆունկցիայի տվյալ արժեքին:

Յերկու անկյունների գումարի յեվ տարբերության, կրկնակի անկյան յեվ կես անկյան յեռանկյունաշափական ֆունկցիաները

Յերկու անկյունների գումարի և տարբերության, կրկնակի անկյան և կես անկյան սինուսը, կոսինուսը և տանգենսը:

Յեռանկյունաչափական ֆունկցիաների նույնական ձևագոխությունները բանաձեռի ոգնությամբ:

Արտահայտությունները լոգարիթմելու համար հարմար տեսքի բերելը

Յերկու սինուաների, յերկու կոսինուաների և յերկու առագենուաների գումարի և տարբերության ձևափոխումը: Յերկու սինուաների գումարի և նրանց տարբերության քանորդի ձևափոխումը: Ոժանդակ անկյան մուծումը:

Յեռանկյունաչափական հավասարումներ յեվ նրանց լուծումները

Գաղափար յեռանկյունաչափական հավասարումների մասին: Յեռանկյունաչափական հավասարումների լուծումը: Հավասարումների լուծման հիմնական յեղանները: Յեռանկյունաչափական հավասարումների վերաբերյալ որինակների լուծումը: Յեռանկյունաչափական հավասարումների արմատների հետազոտումը:

IV ՄԵՄՐԵՍՏՐ

ՀԱՆՐԱՀԱՇԻՎ (22 ժամ)

Լոգարիթմական հավասարումներ

Գաղափար լոգարիթմական հավասարումների մասին: Լոգարիթմական հավասարումների լուծումը:

Լոգարիթմական հավասարումների լուծման հիմնական յեղանները:

Միացությունների տեսությունը յեվ նյուտոնի յերկանդամը

Միացությունները և նրանց ակտակները: Կարգավորություններ, փոխանակումներ և զուգորդություններ: Բանաձեռի, փորոնցով վորոշում և կարգավորությունների, փոխանակումների և զուգորդությունների թիվը: Զուգորդությունների հատկությունը:

Նյուտոնի յերկանդամը: Այսպիսի յերկանդամների արտադրյալը, վորոնք տարբերվում են միայն յերկորդ անդամներով (աղացուցում մաթեմատիկական մակածության մեթոդով): Նյուտոնի յերկանդամի բանաձեռը: Նյուտոնի յերկանդամի բանաձեռի հատկությունները՝ վերածության անդամների աստիճաները, վերլուծության բոլոր անդամների թիվը, յերկանդամի բանաձեռը, վերլուծության բոլոր անդամների թիվը, յերկանդամի բանաձեռները և նդանդանուր անդամը, մեծագույն գործակից

ունկցող անդամը, հաջորդ անդամի գործակիցի ստացումը նախորդ անդամի գործակիցից: Բինոմական գործակիցների գումարը: Այսպիսի որինակների և խնդիրների լուծում, վորոնք պահանջում են միացությունների տեսության և նյուտոնի յերկանդամի կիրառություն:

Հանրահաւելի դասընթացի կրկնություն յեվ խնդիրների լուծում բոլոր բաժինների վերաբերյալ

Տեսական նյութի կրկնություն 1-ին և 2-րդ կուրսերի ծրագրով: Համակցված խնդիրների լուծում, վորոնք 1) բերվում են քառակուսի հավասարումներ, յերկրորդ աստիճանի հավասարումների սխստեմներ, կամ առաջատավություններ կազմելուն, 2) իրենց մեջ պարունակում են 2-րդ կուրսի ծրագրի հիմնական բաժինները, ինչպիս որինակ՝ լոգարիթմները, ցուցչային և լոգարիթմական հավասարումները, միացությունները, նյուտոնի յերկանդամը, բարդ տոկոսները և այլն:

ՅԵՐԱՆԿՅՈՒՆԱԾԱՓՈԽԹՅՈՒՆ (44 ժամ)

Յեռանկյունաչափական հավասարումներ (վերջ)

Յեռանկյունաչափական հավասարումների լուծումը: Արմատների հետազոտումը:

Յեռանկյունաչափական ֆունկցիաների լոգարիթմները

Յեռանկյունաչափական փունկցիաների լոգարիթմները: Աղյուսակների կազմությունը: Յեռանկյունաչափական փունկցիաների լոգարիթմումը և պոտենցիումը:

Ուղղանկյուն յեռանկյունների յեվ նրանց վրա նիմնված խնդիրների լուծումը լոգարիթմների ոգնությանք:

Ուղղանկյուն յեռանկյուն: Ուղղանկյուն յեռանկյունների լուծումը լոգարիթմների ողնությամբ (4 հիմնական գեպքեր և առանձին գեպքեր, յերբ այլաները հիմնական չեն): Ուղղանկյուն յեռանկյունն ուրիշ պատկերների վրա կիրառելու վերաբերյալ խնդիրներ:

Առնցություններ խոռորանկյուն յեռանկյան ելեւենեների միջև

Կախում խոռորանկյուն յեռանկյան անկյունների փունկցիաների միջև: Կախում յեռանկյան կողմի, արտագծած շրջանի արամագծի և հակագիր անկյան սինուսի միջև: Սինուսների թեորեմը: Կոսինուսների թեորեմը: Տանգենսների թեորեմը:

Յեռանկյան անկյունների վորոշումը յերեք կողմերով, Յեռանկյան մակերեսի համար արոհայտություններ։ Արտահայտություններ արտագծած շրջանի շահավելի և ներգծած շրջանի շառավղի համար։

Խոսարանկյուն յեռանկյունների լուծումը՝ խոտորանկյուն յեռանկյունների լուծման 4 հիմնական դեպքերը և խոտորանկյան յեռանկյուններն ուրիշ պատկերների վրա կիրառելու վերաբերյալ խնդիրներ։

V ՍԵՄԵՍՏՐ

ՅԵՐԿՐԱՉԱՓՈՒԹՅՈՒՆ (40 Ժամ)

Տարածաշափուրյան ներածուրյուն, Ուղիղների յեվ հարրուրյունների փոխադարձ դիրքը տարածուրյան մեջ։

Ընդհանուր տեղեկուրյուններ: Գաղափար հարթության մասին. հարթության հատկությունները: Հարթության գիրքը տարածության մեջ. Ուղիղի և հարթության փոխադարձ դասավորությունը: Յերկու հարթությունների փոխադարձ դասավորությունը:

Ուղիղի յեվ հարրուրյան ուղանայացուրյունը, զուգանուրյունը յեվ ուղիղի թերուրյան անկյունը հարրուրյան նկատմամբ, Ուղիղի և հարթության ուղղահայացության հայտանիշը, Թերեմ՝ «Տարածության տվյալ կետով կարելի յե տանել միայն մեկ ուղիղ՝ ուղղահայաց տվյալ հարթությանը և միայն մեկ հարթություն՝ ուղղահայաց տվյալ ուղիղին»: Ուղղահայացի և թեքի յերկարությունը, կետի և հատվածի պրոյեկցիան հարթության վրա:

Ուղիղի թեքության անկյունը հարթության նկատմամբ: Յերեք ուղղահայացների թերեմը: Զուգանուր և խաչվող ուղիղներ, Թերեմներ՝ 1) Յերկու զուգանուր ուղիղների մասին, վորոնցից մեկն ուղղահայաց և հարթությանը. 2) Յերկու ուղիղների մասին, վորոնք ուղղահայաց են հարթությանը. 3) Յերկու ուղիղների մասին, վորոնք զուգանուր են յերրորդին: Ուղիղի և հարթության զուգանուրության հայտանիշները:

Թերեմ այն հարթության մասին, վորոն անցնում և մի ուրիշ հարթության զուգանուր ուղիղով և հատում և այս հարթությունը: Զուգանուր ուղիղի և հարթության հեռավորությունը:

Հարրուրյունների զուգանուրուրյունը: Հարթությունների զուգանուրության հայտանիշները: Յերկու զուգանուր հարթությունների և յերրորդ հարթության հատման վերաբերյալ թերորիմը: Յերկու զուգանուր հարթություններից մեկին ուղղահայաց ուղղողը: Զուգանուր գտնվում են զուգանուր հարթությունների միջև: Զուգանուր հարթությունների հեռավորությունն իրարից: Համապատասխանաբար զուգանուր և միատեսակ ուղղված կողմեր ունեցող անկյուններ:

3. Գետերը յեվ լեռը. Մալցամաքի մեծությունը համապատասխան՝ գետերի մեծ յերկարությունը: Ասիայի գետերի տրանսպորտային նշանակությունը և արհեստական վուսոգման գլխավոր սխառեմները (Չինաստանում, Հնդկաստանում, Միջին Ասիայում):

Գետերը:

4. Կլիման յեվ հողաբուսական գոնաները. Ասիայի դանազան շրջանների կլիմայական հակապատկերները: Աշխարհագրական լայնությամբ ձգված լեռնաշղթաների ազդեցությունը կլիմայի

վրա: Կլիմայական և հողաբուսական զոնաներ. Բևեռային կլիմայի և տունդրայի շրջանները: «Յրտի բևեռ» Հյուսիսային, Ասիայում: Բարեխառն կլիմայի, պողպղային և սևահողային, տագֆային խառն անտառների և խոտավետ տափաստանների շրջանները: Անապատների և կիսանապատների, Ասիական բարձրագանգակի գորշ ու շագանակագույն հողերի շրջանները: Հարավային և Արևելյան Ասիայի մուսոնների շրջանը. Լյոսսային շրջաններ և յենթարեաղարձային բուսականության լատերիտները: Արևելյարձային անտառների և ջունգլիների շրջանները:

5. Բնակչությունը. Նրա քանակը, խտությունը՝ դանազան ժամանում: Ազգային կազմը: Ասիայի պետությունները և նրանց մայրաքաղաքները:

Տ. Ա.ՑՐԻԿԱ (2 ժամ)

1. Աֆրիկայի աշխարհագրական դիրքը յեվ մեծությունը. Ավերի քիչ կտրտված լինելը և յեղերագծի միորինակությունը. սակավամատչելիությունը ծովի կողմից: Աֆրիկայի հետազոտությունը (Վասկո-դե-Գամա, Լիվինգտոն, Սահնլի):

Նեղուցներից՝ Բարեկլ-Մանդերի, Մոզամբիկի:

Թերակղզի՝ Սոմալի:

Կղզիներ՝ Կանարյան, Ազորյան, Հեղիների, Մադագասկար:

2. Աֆրիկայի մակերեսի վրա. Կենտրոնական և Հարավային Աֆրիկայի բարձրագանգակները: Իջվածքները՝ վորպես Աֆրիկայի բնորոշ առանձնահատկությունը. աստիճանաձև ոելյեփ, ծովերով և լճերով լցված իջվածքներ: Հրաբուխներ: Աֆրիկայի լեռները և բարձրագանգակները: Հյուսիս-Արևմտյան Աֆրիկայի ծալքավոր զոնան: Հանածոռ հարստությունները՝ պղինձ, վուկի, քարածուխ, ալմաստ. սրանց աշխարհագրական տեղաբաշխումը:

Լեռներից՝ Դրակոնի:

Հրաբուխներից՝ Կենիա, Կիլիմանջարո:

3. Գետերը յեվ լեռը. Աֆրիկայի գետերի սահանքավորությունը՝ վորպես հետեանք նրա ոելյեփի աստիճանականության: Գետերի ոեժիմի առանձնահատկությունները: Նեղոսի հեղեղումները: Աֆրիկայի գլխավոր լճերը:

Գետերից՝ Զումբեզի, Որանժի:

Լճերից՝ Զադ:

Զրվեժ՝ Ստենիի (Կոնգո գետի վրա):

4. Կիման յեվ հողաբուսական տրամաները, Աֆրիկան՝ զորպես ամենատաք աշխարհամասը, Հյուսիսային և Հարավային Աֆրիկայի տարվա յեղանակները, Մթնոլորտալին տեղումների տեղաբաշխումն ըստ տարվա յեղանակների՝ Աֆրիկայի գանազան մասերում՝ Հասարակածային և արևադարձային պարբերական անձրևները, Գվինեայի ծոցի մոասոնները, Պատումների գերը Աֆրիկայի կլիմայի մեջ և անապատների գոյացումը, Կենտրոնական Աֆրիկան՝ վորպես արևադարձային խոնավ անտառների շրջան, Սավաններ և մերձարևադարձային անտառներ, արևադարձային տափաստաններ, արևադարձային անապատներ. սրանց հողը, բուսական և կենդանական աշխարհը, Անապատների տեսակները և նրանց բնությունը, Ովազիսներ, Նեղոսի հովիտը, Հյուսիսային և Հարավային Աֆրիկայի յենթարևադարձային շրջանները.

5. Աֆրիկայի բնակչությունը, քանակը, խտությունը և աղբային կազմը, Աֆրիկան՝ վորպես գաղութային մայրցամաք:

XIII. ԱՄԵՐԻԿԱ (3 ժամ)

1. Աշխարհագրական դիրքը, տարածությունը և ափերի գծագրությունը, Խաղաղօվկիանոսյան և Ատլանտյան ափերի տարբեր աստիճանի կտրտվածությունը, Ամերիկայի հայտնագործությունը և հետազոտությունը (Քրիստափոր Կոլումբ և Ամերիկո Վեսպուչի: Հուալուպ), Ամերիկայի գրավումն և բնակեցումը, Ծոցեր՝ Հուգոնի, Ա. Լավրենտիոսի, Կալիֆորնիայի, Նեղուցներից՝ Մազելլանի:

Թերակղիներից՝ Յուքաթան, Կալիֆորնիա:

Կղզիներից՝ Հյուսիս-ամերիկան արշիպելագ, Նյուֆառնդլենդ, Ալեռութան, Մեծ անտիլյան (Կուբա, Հայդթի, Յամայկա, Պորտո-Ռիկո), Փոքր Անտիլյան:

2. Ամերիկայի մակերեսի բնույթը. Հյուսիսային և Հարավացին Ամերիկաների կառուցվածքների նմանությունն ու տարբերությունը, Լեռներ, դաշտավայրեր և բարձրավանդակներ, Ռելիեֆի ազդեցությունը գետերի ուղղության և բնույթի վրա, Հանածո հարստություններ և նրանց աշխարհագրական տեղաբաշխումը (Վուկի, արծաթ, յերկաթ, պղինձ, նաֆթ և քարածուխ):

Կորդիլերների լեռնային սիստեմը՝ Ժայռոտ, Կասկադյան և Սիյերա-Նեադա:

Դաշտավայրերից՝ Որինոկոյի:

3. Ամերիկայի գետերը յեվ լները, Ատլանտյան և Խաղաղօվկիանոսյան գետային ավազանների մեծությունների խիստ տարբերությունը և այդ ավազանների գետերի բնույթը, Հյուսիս-Ամերիկայն մեծ լճերը:

Գետերից՝ Յուկոն, Մեկենզի, Լավրենտիոսի, Միսսիսիպի՝ Միսուրիի և Ոհազոյի հետ միասին՝ Կոլորադո, Կոլումբիա, Նիագարա գետ, Որինոկո:

Լճերից՝ Վերին, Հուալուպ, Երի և Ոնտարիո:

4. Կիման յեվ հողաբուսական տրամաների պայմանների փոփոխության հաջորդականությունը՝ հյուսիսից հարավ, վորպես հետևանք աշխարհագրական լայնությամբ ձգվող լեռների բացակայության, Զերմության խիստ տատանումները՝ վորպես հետևանք հարավային և հյուսիսային քամիների ազատ ներթափանցման, Ծովային հոսանքների ազգեցությունը կլիմայի վրա, Կլիմայական փոփոխությունները արևելքից արևմուտք ընկած ուղղությամբ, Արևմտյան-Ամերիկական և մեքսիկական բարձրավանդակի յերաշտային կլիման, սրանց բուսական և կենդանական աշխարհը, Տունդրայի և տայգայի գոտիները, պլերիա-տափաստանները՝ կենտրոնական մասում և խոնավ յենթարածալինը՝ Մեքսիկայի ծոցի և Անտիլյան կղզիների ծովագերում, Հյուսիսային Ամերիկայի Խաղաղօվկիանոսյան ափը, Սրանց բուսական աշխարհը:

Տաք կլիմայի գերակշռությունը Հարավային Ամերիկայում, Արևադարձային անտառների շրջանները և սրանց բուսական ու կենդանական աշխարհը, Սելվա:

Լյանոսներ, Կամպոսներ, Արգենտինյան Պամպան և պատագոնիայի յերաշտային տափաստանները, սրանց բուսական և կենդանական աշխարհը, Արեմայան ափի լեռնային շրջանները և Ատակամա անապատը, Ռելիեֆի, պասսատների և ծովային հոսանքների ազգեցությունը Ամերիկայի կլիմայի վրա:

5. Ամերիկայի բնակչությունը, քանակը, տեղաբաշխումը յերկրի տերորիստիայի վրա, ազգային կազմը, Նեղութերը և հնդիկ ցեղերը, սրանց իրավական վիճակը, Ամերիկայի պետությունները և սրանց մայրաքաղաքները:

XIII. ԱՎՍՏՐԱԼԻԱ. ՑԵՎ. ՈՎԿԻԱՆԻԱ. (2 Ժամ)

1. Ավստրալիայի մեծությունը յեվ նրա մեկուսացած դիրքը. Նրա հայտնագործման և գրավման պատմությունը: Կուկի ճանապարհորդությունները: Մայրցամաքի ափերի պարզ գծագրությունը: ծովերը, ծոցերը, նեղուցները:

Ովկիանիայի կղղիները—կորալլական և հրաբխային:

Ծովերը՝ կորալլական:

Ծոց՝ Ավստրալիական:

Թերակղղի՝ Ցորկ:

Կղղիներից՝ Հավայի, Սամոա, Ֆիջի, Մարիանյան, Մարշալյան, Կարուլինյան:

2. Ռելիեֆը. Մակերեռութիւնը պարզ կազմությունը: Արևելյան բրաձրման մաս և Ավստրալիական ծալքավոր լեռներ: Կենտրոնի իջվածքը և Արևմտյան բարձրավանդակը: Ռելիեֆի աղղեցությունը գետերի ուղղության վրա: Ոգտակար հանածոները և սրանց տեղաբաշխումը (վոսկի և քարածուխ):

3. Կիրման յեվ բուսական աշխարհը. Ավստրալիայի հյուսիսային մասը՝ վորպես արեալաբանական խոնավ կլիմայի, արեալաբանական անտառների և տափաստանների շրջան, Ներքին և արևմտյան մասերի ցամաքային կլիման. այս մասերի տափաստանները և անապատները: Արևելյան խոնավ ափը և հարավային մերձարեալաբանական Ավստրալիա: Գետերի բնույթը: Ավստրալիայի բուսական և կենդանական աշխարհների առանձնահատկությունները:

Գետեր. Մուլրել՝ Դարվինգի հետ:
Լիճ՝ Եյր:

4. Ավստրալիայի բնակչությունը. Սրա քանակը և խտությունը: Ազգային կազմը: Ավստրալիական տեղացիների վիճակը:

XIV. ԽՍՀՄ ՖԻԶԻԿՈ-ԱՇԽԱՐՀԱՐԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ (10 Ժամ)

1. ԽՍՀՄ աշխարհագրական դիրքը, մեծությունը: Համեմատություն այլ պետությունների հետ:

Սահմանները և սահմանակից պետությունները: Ցամաքային և ծովային սահմանները: ԽՍՀՄ սահմանների Փիզիկո-աշխարհագրական, անտեսական, քաղաքական և սուրատեղիական բնութագրությունը:

ԽՍՀՄ սահմանները վողողող ծովերը. սրանց Փիզիկո-աշխարհագրական բնութագրությունը և տրանսպորտային անտեսական գնահատությունը: Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսի յուրացումը:

Կղղիներից՝ Կալգուե, Վայգաչ, Կոմանդորյան, Վրանգելի, Նոր Յերկիր, Հյուսիսային Յերկիր:

2. Ռելիեֆը. ԽՍՀՄ Յեվրոպական մասի ռելիեֆի միորինակությունը. Ինսերի ծայրամասերի դիրքը. սրանց կառուցվածքի և ժամանակակից ձևերի համառոտ բնութագրությունը. ԽՍՀՄ-ի գաշտավայրերը և բարձրությունները:

Մորենային և վոչ մորենային շրջանները Յեվրոպական մասում և նրանց բնութագրող ռելիեֆի տիպերը:

Ռելիեֆի ազգեցությունը ԽՍՀՄ կլիմայի և բուսականության վրա:

Լեռներ՝ Խիբրինի, Ղոբիմի (Խոման-Կոշ), Կովկասյան (Կազբեկ և Ելբրուս), Ուրալյան (Նար-Դնայա), Պամիր (Ստալինի պիկը), Հինգուկուց, Տյան-Շան (Խան-Տեղրի), Ալթայան (Բելուխա), Սայանյան, Բայկալյան, Յարլոնովի շղթա, Ստանովյա, Վերխոյանսկի, Չերսկի, Անազիրի, Կյուուչևսկայա Սովկա (Կամչատկա):

3. ԽՍՀՄ հանածոն հարսուրյունները. Կարեռագույն հանածոնների հանքավայրերը: Խորհրդային իշխանության նվաճումները հանքային հարսուրյունների հետազոտության ասպարիզում:

4. ԽՍՀՄ Եերեխն ջերը. Գետերը և նրանց ռեժիմի առանձնահատկությունները. Նրանց վերկարությունը և գնահատությունը՝ նավազնացության, եներգետիկայի և վոստոգման տեսակետից: Լճերի տիպերը և լճային շրջանները: Ճահճային զանգվածները: Կարստային շրջանները:

Գետեր՝ Ռնեգա, Հյուսիսային Դվինա՝ Վեչեգալայի, Սուխոնայի և Յուգի և Յուգի հետ միասին, Մեղեն, Պեչորա՝ Ուսամի և Իժմայի հետ. Դնեպր՝ Բելը կինայի և Պրիպյատի հետ, Դոն՝ Դոնեցի հետ, Վոլգա՝ Շեքսնայի, Ուկայի և Կամայի (Չուսովյայա, Վյատկա, Բելայա վտակներով) հետ. Ուրալ, Ուր՝ Իրտիշի և Տարովի հետ. Յենիսեյ՝ Անգարայի և Տունգուսկանների հետ, Լենա՝ Ալդանի, Վիտիմի և Վիլյույի հետ. Ամուր՝ Շիլկայի, Արգունիայի, Բուրեկայի և Ռևուրի հետ. Չերավջան, Իլի, Չու, Սարի-սու, Մուրգաբ, Ռիոն՝ Քուռ՝ Արաքսի հետ.

Զբանցքներ՝ Բալթիկ-Սպիտակծովյան, Վոլգա-Դոն, Վոլգա-
Մուկվա, Կամա-Պեչորյան միավորություն Մարյինյան սիս-
տեմ:

5. ԽՍՀՄ-ի կլիման. ԽՍՀՄ-ի կլիմայական գոտիները. Իզո-
թերմների քարտեզը: Տեղումների տեղաբաշխումը: Յեվրոպական
մասի հյուսիսային և հարավային մասերի կլիման. Կենտրոնա-
կան և արևելյան մասերի բարձր ճնշողության շրջանները:
ԽՍՀՄ-ի կլիմայական շրջանների՝ Դրիմի հարավային ափի,
Կովկասյան ափի, Անդրկովկասյան տափաստանների և Միջին
Ասիական անապատների բնութագիրը. Հեռավոր Արևելքի մոռո-
սոնային կլիման. Դիտության և տեխնիկայի նվաճումները
տնտեսական գործունեյության բնագավառում կլիմայի բացա-
սական ազդեցությունների դեմ պայքարելու գծով:

6. ԽՍՀՄ հողերը. Հողերի տիպերը և նրանց տեղաբաշխումը:
Հողային զոնաները: Տարբեր հողերի ոգտագործումը և հանքա-
յին պարարտանյութերի նշանակությունը:

7. ԽՍՀՄ բուսականությունը. աշխարհագրական լայնությամբ
և միջորեսականներով ձգված բուսական զոնաները: Կլիմայի,
հողերի և բուսականության փոխազդեցությունը և փոխագր-
ձորեն կախված լինելը:

8. Բնակչությունը. Նրա քանակը, Ծննդնդն և մահացու-
թյունը: Բնակչության աճը՝ կապիտալիստական յերկրների աճի
համեմատությամբ: Բնակչության խտությունը: Բնակչության
ժաքսիմալ և մինիմալ խտության ռայոնները: Բնակչության
տեղաբաշխման մեջ կատարված փոփոխություններն առաջին
հնգամյակում: ԽՍՀՄ բնակչության ազգային կազմը:

Ֆիզիկական աշխարհագրության դասընթացի գործնական աշխա-
տանքների որինակելի ցուցակ

1. Կարողանալ տվյալ վայրում կողմորոշվել զանազան
միջոցներով:

2. Կարողանալ վոչ մեծ հողամասի աչքաչափային հանույթ
կատարել և համապատասխան տեղագրական նշանները դնել:

3. Պարզ գործիքների ոգնությամբ հանել հողամասի, փո-
ղոցի և այլն պլանը:

4. Պարզ գործիքների (եկլիմետր, տրանսպորտեր) ոգնու-
թյամբ վրառչել լուսատուների (Բեռուային աստղի) բարձրու-
թյունը:

5. Գնոմոնի գործածություն, իր վայրի միջորեականի վո-
րոշում:

6. Կաղմել կոլեկցիաներ՝ իր վայրի ապահովերի, բրածո-
ների, ոգտակար հանածոների, հողերի: Կաղմել հերքարիում:

7. Դիտողություններ յեղանակի ընթացքի (ջերմաստի-
ճանի, ոդի ճնշման. մթնոլորտային տեղումների, քամում և
այլն). այս դիտողությունների տվյալների մշակում:

8. Սինոպտիկ քարտեղներով աշխատելու կարողություն:

9. Ոգերևութաբանական դիտողությունների համար ամե-
նապարզ գործիքներ (հողմացույց, անձրևաչափ) պատրաստել:

10. Զանազան զոնաների կլիմայական տվյալների ազյու-
սակներ կաղմել:

11. Վարժվել քարտեղների ընդորինակելու մեջ՝ փոփոխե-
լով մասշտաբը:

12. Կոնտուրային քարտեղներով աշխատել, պատրաստել
կոնտուրային քարտեղներ. պատրաստել կլիմայական, հողային,
բուսական, աղջկության խտության և այլ նման
պարզ քարտեղներ:

13. Տվյալ թեմպին համապատասխան իլյուստրացիայի
ընտրություն կատարել, ալբոմներ կաղմել. լրագրից ընտրել և
կարել թեմպի համապատասխան նյութեր:

14. Կաղմել պարզ սխեմաներ:

15. Դասընթացին համապատասխան պարզ ոժանդակ պա-
րագաներ պատրաստել:

16. Ճանապարհորդական նկարագրություններից և այլ
դրականությունից հատվածների ընորություն կատարել՝ գասըն-
թացի այս կամ այն մասը բնութագրելու համար:

17. Աշխարհագրական կարինետ կազմակերպել և աշխատել
այդ կարինետում. աշխարհագրական ոժանդակ պարագաները
սիստեմավորել, գույքամատայան անցկացնել և կանոնավոր պահ-
պանել կաղմակերպել աշխարհագրական խմբակ. զեկուցումներ
կարդալ աշխարհագրական թեմաների շուրջը:

Ֆիզիկական աշխարհագրության դասընթացի հետ կապված են կա-
տարել որինակելի քետաներ

1. Կողմնորոշում տվյալ վայրում. Վորոշել հորիզոնի կողմե-
րը կողմացույցի, արևի, ժամացույցի, ծառերի ոգնությամբ:
Տվյալ վայրի միջորեականը (կեսորվա գիծը) գորոշել:

Դիտել, թե ինչպես ընդարձակվում ե հորիզոնը, յերբ վերե
ենք բարձրանում: Վորոշել հեռավորությունները:

Հասկանալ և գործածել տեղադրական քարտեզը:

2. Յերկրանական ենիկուրսիա կատարել դեպի տարհանք կամ
յերկրաշերտի վարեվի բնական բազմածք՝ զետի փլոծ տի, ձօր. Դի-
տել բացվածքը, նրա բարձրությունը, խիստ թեքվածությունը.
մերկացած ապաները, շերտավորումների հաջորդականությունը
քարացումները ապաներում, ոգտակար հանածոները:

Զորի խորությունը, լայնությունը՝ նրա զանազան մասե-
րում: Զորի պատերի բնույթը և կազմությունը. փլամածքները,
սոլանքները: Ալբյուր ձորախորքում: Դիտել թե ինչպես ե
աճել ձորը:

3. Գետակ յեվ զես. Դիտել գետակի և գետի ակունքը: Գետի
լայնությունը, խորությունը, հոսանքի արագությունը չափել:
Գետի հունը, հովհատը, տերրասներ, գետատաշտ, հին հուն (ստա-
րիցա), ծանծաղուտ: Գետի հունի հատակի ձևերը, յերբ նա հո-
սում ե տարրեր լեռնային տեսակների միջով: Հունի մոլորա-
պտույտը: Գետի աշխատանքը. ափերի վոզողումը. գետային
սուսածքներ: Կամուրջների և ամբարտակների կառուցում:

4. Հողը. Դիտել հողի հատվածքը: Հողային հորիզոններ.
սրանց չափելը. հողի կառուցվածքը: Հողի փոփոխվելը՝ լեռնա-
յին տեսակների և ոելյեֆների մակերնույթի համեմատ: Հողերի
նմուշներ աշխարհագրական կարինետի համար:

5. Լանդաշբեներ. Դիտել տեղական լանդշաֆտները՝ ան-
տառներ, տափաստաններ, մարգագետիններ, ծահիճներ և այլն:
Յուրաքանչյուր լանդշաֆտի բնորոշ գծերը: Պարզել ոելյեֆի,
հողի և բուսական ծածկույթի միջև յեղած փոխազարձ կապը:
Լանդշաֆտների կրած փոփոխությունները մարդու գործունեյու-
թյան առնչությամբ:

6. Ալիբեվլոյրաբանական տարրեր. Դիտել ոգերեսույթաբանա-
կան տարրերի ընթացքը. (Չերմություն, ձնշում, խոնավություն,
տեղումներ. սրանց սեղոնային և որական ընթացքը. սառնամա-
նիքներ, հալք. վալրեր, վորոնք ավելի հաճախակի յեն յենթարկ-
վում ամառվա գիշերային սառնամանիքների և այլն):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԴԱՍՏԱՎԻ ՀԱՄԱՐ

1. Կրաքար. Общее землеведение.

2. Սիլմոր. Основы современной географии.

3. Щукин. Общая морфология суши.
4. О Г, Геология, т. 1.
- 5 Тверской, Курс геофизики, т. I и II.
6. Лесгафт, Краткий курс физической географии.
7. Оболенский, Основы метеорологии.
8. Бенуа и Никитин, Курс метеорологии с атласом синоптических карт.
9. Берг, Основы климатологии.
10. Гейгер, Климат приземного слоя воздуха.
11. Шокальский, Физическая океанография.
12. Обручев, Образование гор и рудных месторождений.
13. Глинка, Почвоведение.
14. Усов, Практические работы по начальному курсу географии.
15. Усов, Наглядные пособия по начальному курсу географии—статья в сборнике „География в школе“ № 2, СПБ, 1914 г.
16. Шенберг, Географические экскурсии.
17. Лебедев, Работа на географических экскурсиях.
18. Константинов, Географические экскурсии в школе 1 ступ.
19. Павлов, Геологический очерк окрестностей Москвы.
20. Борзов, и Семихатова, Географические экскурсии в окрестностях Москвы.
21. Яковлев, Географические экскурсии в окрестностях Ленинграда.
22. Лебедев, Завоевание земли. История географических открытий и путешествий.

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

Բ Ա Ց Ա Տ Բ Ա Կ Ա Ն

Աշխարհագրության տարրական դասընթացի մեթոդիկայի ձիշտ ավանդան անհրաժեշտ նախապայման են հանդիսանում մանկավարժական տեխնիկումի 1-ին և 2-րդ կուրսերում ավանդվող ֆիզիկական և տնտեսական աշխարհագրության գասընթացները:

Այս առարկաներն անցնելիս հատուկ ուշադրություն պետք է դարձնել նրանց մեթոդապես ուղղիղ մշակելու վրա, վորպեսզի մանկավարժական տեխնիկումի ուսանողներն այդ պարապմունքների ժամանակ գործնականապես ծանոթանան աշխարհագրության տարրերը բաժինների ավանդան մեթոդներին, ձերին և յեղանակներին. ծանոթանան զննական և լաբորատոր պարագաների ոգտագործմանը, նրանց կիրառմանը և մեթոդական գնահատմանը:

Բացի այս, այդ պարապմունքներին ուսանողները պետք է լավ ծանոթանան եքսկուրսիոն հետազոտության յեղանակների հետ և այն ուայոնի ֆիզիկական և տնտեսական աշխարհագրական պայմանների ուսումնասիրության, վորտեղ գտնվում ե տեխնիկումը և վորտեղ, բնականաբար, նրանք անց են կացնում իրենց մանկավարժական պրակտիկան:

Այսպես պատրաստվելով՝ մանկավարժական տեխնիկումի ուսանողը պետք է տիրապետի գալառագիտության հետազոտական աշխատանքի տարրական ուսանողների ուսումնական գործիքություններին, վորպեսզի հետագայում կարողանա այդ ուսակությունները կիրառել այն ռայոնի աշխարհագրությունն ուսումնասիրելիս, վորտեղ պիտի աշխատի ինքը. հենց այդ ուսումնասիրության վրա նա պիտի կառացի իր աշխատանքը յերեխաների հետ:

Այս բոլոր պահանջների բավարարումը զգալիորեն հեշտանում է այն դեպքում, յերբ աշխարհագրության դասընթացի ուսանողների պարականայի մեթոդական դասընթացումը և ուսանողների պրակտիկայի մեթոդական դեկաված ուսուցչի ձեռքին:

Ծրագրում տված են հետևյալ բաժինները՝ իրենց մշակման մոտավոր ժամկետներով.

1. Ներածություն (2 ժամ):

2. Տարրական դպրոցում աշխարհագրության դասավանդման ընդհանուր խնդիրներ (2 ժամ):

3. Մեթոդական խնդիրներ, վորոնք կապված են յերրորդ տարվա ուսման ծրագրի հետ, այն են:

1. Կողմնորոշումն տարածության մեջ (2 ժամ):

2. Ծանոթություն տեղի ուղիփակին և տեղագրական պլանին (2 ժամ):

3. Մակերեսությային և ստորերկրյա ջրեր (2 ժամ):

4. Ծանոթություն քարտեզին (4 ժամ):

5. Յերկրագույղը և նրա պատկերավորումը գլուխութ վրա. լիսագնների քարտեզը (2 ժամ):

6. Յեղանակ և կլիմա (2 ժամ):

7. Զերմային տարրեր գոտիների բնության և բնակչության կյանքի պատկերներ (4 ժամ):

4. Մեթոդական խնդիրներ, վորոնք կապված են ուսման չորրորդ տարվա ծրագրի հետ (8 ժամ):

Ծրագրի մեջ զիսավոր տեղը արվում է ուսման յերրորդ տարվա ծրագրային նյութի ուսումնասիրության հետ կապված աշխարհագրության մեթոդիկալին, վորը մեթոդապես համեմատաբար պես բարդ է և զժվարին:

Ցանկալի յե վոր ծրագրի յուրաքանչյուր բաժնի վերաբերյալ (ուսուցչի կողմից մեթոդապես լուսաբանվելուց հետո) ուսանողները մշակեն շղափած թեմաների սխեմաներ և փորձական դասերի պլաններ. Մեթոդական հարցերի խորացումը և նրանց լրացումը պիտի կատարվեն կոնքերենցիաներում՝ ուսմանողների աված փորձական դասերը քննության առնելիս:

Աշխարհագրության մեթոդիկայի ծրագիրը նախատեսնում է աշխարհագրության դասավանդման սերտ կազմ բնագիտության, ապա և այլ առարկաների (մաթեմատիկայի, լեզվի և այլն) հետ:

Անհրաժեշտ ե ավելացնել, վոր ուսանողների պոլիտեխիկէ ունակությունները պետք ե ոգտագործվեն, վորքան հնարավոր ե լրիդ՝ աշխարհագրության մի շաբթ պարզ ոժանդակ պարագաներ պատրաստելու համար, այս պարագաները նրանք պետք ե կիրառեն իրենց փորձնական դասերին, ապա և իրենց մշտական պաշտոնավայրում:

Ծրագրում, ժամանակի սղության դատճառով, քիչ տեղ ե տրված աշխարհագրության դասավանդման ներածությանը և ընդհանուր խնդիրներին:

Ներածական դասընթացի նպատակն ե՝ ուսանողներին համառոտագիր ծանոթացնել աշխարհագրության մեթոդիկայի պատմական դարդացման ետապների հետ և ցույց տալ թե ինչպես անցյալում և ներկայում, կազիտալիստական հասարակակարգի պայմաններում, աշխարհագրությունը ծառայել և շարունակում ե ծառայել կապիտալիստական կարգերի դասակարգային շահերին և թե ինչպես բուրժուական մեթոդիստներն ոգտագործում են այն բուրժուական դաստիարակության նպատակների համար: Այստեղ անհրաժեշտ ե ուշադրություն դարձնել աշխարհագրության մեթոդիկայի բնագավառում՝ կոմենսկու, Ֆրանկոյի, Ռուսոյի, Պետալոցցու արտահայտած գաղափարների վրա: Պետք ե նշել, թե ինչպես մինչեղափոխական Ռուսաստանի մեթոդիստները փորձ եյրն անում տարրական դպրոցում աշխարհագրության պարագմունքները անցկացնել բացատրական ընթերցանության ժամանակ, առանց նախապես ծանոթանալու աշխարհագրության տեղական դավադիտական նյութերի հիման վրա:

Պետք ե ցույց տալ, թե ինչ պահանջներ ե դնում աշխարհագրության դասավանդման առջև ԽՍՀՄ-ի սոցիալիստական շինարարությունը, վորը հենված ե յերկրի բոլոր անկյուններում արտադրողական ուժերի մանրամասն ուսումնասիրության և աշխատավոր լայն մասսաները սոցիալիզմի կառուցման մեջ գրավելու վրա:

Դրսերել ալս աշխատանքի մեջ մանկավարժի խոշոր դերն և աշխարհագրության նոր ծրագրերի նշանակությունը:

Ապագա մանկավարժների հատուկ ուշադրության առարկա պիտի դառնան ակտիվ մեթոդներին ծանոթանալը և նրանց մանկավարժական հիմնավորումը, այս մեթոդները սերտ կապված

են աշխարհագրական դիտողությունների կազմակերպման, եքըսկության կության և լարուատոր աշխատանքներ անցկացնելու հետ:

Յերրորդ բաժինը, այն ե՝ «Մեթոդական հարցեր, վորոնք կապված են յերրորդ տարվա ուսման հետ», առանձնացնում ե աշխարհագրության տարրական դասընթացի մեթոդիկայի այն հիմնական հարցերը, վորոնք կարու են լրակատար մեթոդական լուսարանման և մեթոդական մշակման:

Այս հարցերը բավականաչափ լրիվ և խորը յուրացնելուն մեծ ոգնություն կհասցնեն ուսանողների հաճախումները փորձագած դասատուների դասերին՝ ծրագրի տարրեր բաժիններն անցնելիս, ապա հետո ուսանողների տված փորձնական դասերը դպրոցում: այդ փորձնական դասերը պիտի մեթոդական տեսակետից քննության առնվեն և գնահատվեն մեթոդական կոնֆերենցիաներում:

Միմիայն աշխատանքի այսպիսի կազմակերպությամբ ծրագրի տարրեր հարցերի վերաբերյալ մեթոդական պրյուները կարող են հարկավոր չափով լրիվ և հիմնավոր յուրացվել:

Չորրորդ բաժնում, այն ե՝ «Չորրորդ տարվա ուսման ծրագրի հետ կապված մեթոդական հարցեր», զգալի տեղ ե տրվում աշխարհագրական ոժանդակ պարագաների տեսությանը՝ կապված նրանց, ոգտագործման պրյուների խնդրի հետ: Մեթոդական այս միանգամայն հիմնավորված ե:

Յեթե ուսման յերրորդ տարում զգալի չափով դիտողության և ուսումնասիրության առարկա յեր հանդիսանում յերկրի կոնկրետ մակերեսություն իր աշխարհագրական բովանդակությամբ, վորը մատչելի յե անմիջական դիտողությանը և ուսումնասիրությանը, ապա չորրորդ տարում աշխարհական անցնում և ԽՍՀՄ ընդարձակ տերրիտորիայի ուսումնասիրության, վորը նա արդեն անկարող ե անմիջապես դիտելու: Ուստի այս դասընթացի կրթական և դաստիարակչական նշանակության աստիճանը անմիջական կախումն ունի աշխարհագրական ոժանդակ պարագաների առկայության հետ և այն խնդրի հետ, թե վոր չափով դասատուն կկարողանա ոգտագործել այդ պարագաները մանկավարժական պրոցեսում: Բանի վոր առ այժմ մենք չունենք աշխարհագրության տարրական դասընթացի համար անհրաժեշտ քանակությամբ ոժանդակ պարագաներ, ուստի ծրագրի մեջ հարկավոր ուշադրություն ե դարձրած դառնագան լրա-

գրերի, հանգիսների ոգտագործման վրա. սրանք, թեկուղ մաս-
սամբ, իլլուստրատիվ նյութ են մատակարարում ծրագրի տար-
բեր բաժինների վերաբերյալ: Յեթե շնորհալի կերպով ոգտա-
գործվեն լրագրային ախալիսի նյութերը, վորոնք պարզում և
պատկերավորում են սոցիալիստական շինարարության ընթացքը
և աշխատավորների կողմից արտադրության և կյանքի նոր ձե-
վերի յուրացումը, ապա այդ զգալիորեն կրաքրացնի դասա-
վանդման վորակը:

Ինքնըստինքյան հասկանալի է, վոր լրագրալին նյութերի
ոգտագործման այդպիսի նմուշներ պիտի ցուցադրվեն աշխար-
հագրության մեթոդիկայի պարագմունքների ժամանակ:

ԽՍՀՄ աշխարհագրությունն անցնելիս՝ մեծ ոժանդակու-
թյուն ցույց կտա, նույնպես զանազան յերկրների բնության և
կյանքին վերաբերվող աշխարհագրական գեղարվեստական գրա-
կանության ինքնուրույն ընթերցանությունն աշակերտության
կողմից:

ԾՐԱԳԻՐ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (2 Ժամ)

Աշխարհագրությունը վորպես գպրոցական դասավանդման
առարկա: Աշխարհագրության մեթոդիկայի զարգացման գլխավոր
հատակները:

Բուժությական մեթոդիստների կողմից աշխարհագրական
նյութը դաստիարակչական նպատակների համար ոգտագործելը

II. ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՐՆ- ՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ (2 Ժամ)

1. Համկոմկուսի կենտկոմի վորոշումները տարրական և
միջնակարգ գպրոցներում աշխարհագրությունը դասավանդելու
մասին:

2. Յերեխաների հետաքրքրությունը գեղի աշխարհագրա-
կան գիտողությունները և հետազոտությունները և այդ հետա-
քրքրության ոգտագործումը ուսուցման գործում:

Դավառագիտական նյութի նշանակությունը ուսուցման
մեջ: Մանկավարժի նախապատրաստվելը գավառագիտական նյու-
թերի հիման վրա աշխարհագրական պարագմունքներ տանելու
համար:

3. Աշխարհագրության պարագմունքները կազմակերպելու ձևերը:

ա) Գալառագիտական աշխարհագրական եքսկուրսիաները՝
տարրական դպրոցում: Քարտեզների ոգտագործումը եքսկուր-
սիաների ժամանակ: Յերեխաների գիտողություններն իրենց
ուսուցում տարվող սոցիալիստական շինարարության միջոցին
բնական պայմաններն և ազգաբնակության աշխատանքային
ունակություններն ոգտագործելու մասին: Աշխարհագրական
կուեկցիաների հավաքելը և դպրոցական թանգարան կազմա-
կերպելը:

բ) Աշխարհագրական գիտողություններ դպրոցի շրջակայ-
քում: Յերեխաների մասնակցությունը աշխարհագրական պարզ
գիտողությունների մեջ: Դիտած նյութի մասին գրանցումներ
և ցուցակագրություններ կատարելը: Ֆենոլոգիական գիտողու-
թյուններ և յերեխաների հետաքրքրությունը դրա նկատմամբ:

գ) Ամենապարզ լարուրատորական աշխատանքներ աշխար-
հագրության վերաբերյալ: Ծելյեփի ամենապարզ ձեռք ծեփելու
կարուատոր աշխատանքներ պլանով և քարտեզներով: Քարտեզ-
ների հետ կապված լարուրատորական աշխատանքների ինչ տե-
սակներ պիտի կիրառել ծրագրի տարրեր բաժիններն անցնելիս:
Տարրական գպրոցի աշխարհագրության գասերի կառուցման
առանձնահատկությունները: Դասավանդման զնականության
նշանակությունը: Դիտակարիկ նյութեր պատրաստելը և աշխար-
հագրության գասերին ոգտագործելը:

4. Աշխարհագրության ծրագրի անալիզը, ժամանակի բաշ-
խումը ծրագրի տարբեր մասերն անցնելու վրա: Ծրագրի այն
հարցերը, վորոնք պետք ունեն սեղոնային ուսումնասիրու-
թյան:

5. Աշխարհագրության դասագրքերի անալիզը: Դասագր-
քերի նյութերի ոգտագործումը դասարանային պարագմունք-
ներին: Ելլուստրատիվ նյութեր և նրանց ոգտագործումը:

Տարրական գպրոցի յերեխաների համար աշխարհագրու-
թյան վերաբերյալ ընթերցանության գրքեր: Ինչ մեթոդական
պահանջներ կարելի յե զնել աշխարհագրական մանկական գրա-
կանության առջև:

**III. ՈՒՍՄԱՆ ՅԵՐՐՈՐԴ ՏԱՐՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ**

1. Կողմնորոշում տարածության մեջ (2 ժամ). Աշակերտության գործնական աշխատանքները դպրոցի բակում: Կողմնացուց և նրա կիրառումը կողմնորոշման համար: Ինչպես ոգտվել կողմնացուցով՝ եքսկուրսիաներում: Կողմնացուցի կիրառումը դպրոցի շրջակայքն աչքաչափով հանույթ կատարելիս: Ինչպես մասշտաբ մշակել և պարզ պլաններ կազմել: Հասարակականուրեն ոգտակար տարբն այս աշխատանքների մեջ: Ուսյոնական կենտրոնի պլանն ուսումնասիրելու հետ կազմված լաբորատոր աշխատանքներ: Ինքնագործ պարագաներ և նրանց պատրաստելու ուսուցչի և աշակերտների ուժերով:

2. Մանորություն տեղի ունեֆին յեվ տեղական պլանին. (2 ժամ). Մեթոդական ցուցմունքներ շրջակայքի ունեֆին ծանոթանալու նպատակով եքսկուրսիաներ կատարելու մասին: Դիտողությունները գրաֆիկ ձևով արձանագրելը: Ամենապարզ հարթաչափման լեզակները: Չորերի ձևերի և նրանց կրած փոփոխությունների ուսումնասիրություն: Պայքար ձորերի աճի դեմ: Չորային արտաթափափածքներ և նրանց ազդեցությունը գետի հոսանքի վրա: Գետահովիտ, գետատաշտ (պոյմա) և ջրաբաժաններ: Աղջաբնակության տնտեսական գործունեյության ազդեցությունը ուղյեփի վրա: Բնակավայրերի տեղագրությունը՝ ուղյեփի կապակցությամբ: Ոժանդակ պարագաների տեսակները, սրանք պատրաստելու և կիրառելու ուղյեփի ուսումնասիրության գործում: Տեղագրական քարտեզներ և սրանց կիրառումը եքսկուրսիաներում:

3. Մակերեսային յեվ սուրեկրյա ջրեր (2 ժամ). Ինչպես կազմակերպել ջրհորների մեջ գետանցին ջրի մակերևույթի դպրոցական պարզ դիտողություններ: Գետնային ջրերը դիտելու եքսկուրսիաների միջոցով: Դիտողություններ կազմակերպել տարբա տարբեր յեղանակներին գետի, նրա կյանքի և աշխատանքի նկատմամբ: Տվյալ վայրի գետերի տնտեսական ոգտագործումը: Դպրոցի շրջակայքի լճերի, ճահճների, լճակների եքսկուրսիոն ուսումնասիրությունը աշխարհագրության տեսակետից: Դպրոցի շրջակայքի սխեմատիկ քարտեղ կազմելը:

4. Մանորություն դպրոցի շրջակայքի բարձրականության պատճենը պարզությունը պարզությունը և յերեխաների տնտեսական ոգտագործումը:

Կերտաների հետ աշխատանք տանելու համար: Լաբորատոր աշխատանքներ՝ քարտեղի հետ: Դպրոցի շրջակա վայրերի պատի քարտեղը մեծացնելը և պատրաստելը:

5. Յերկրագունդ յեվ նրա պատկերումը գործուսի վրա յեվ կիսագնդերի բարեկի վրա (2 ժամ). Ինչպես վարել նախնական աշխատանքներ գլոբուսի հետ: Յերկրի որական և տարեկան պտույտի վերաբերյալ փորձ և դիտողություններ կազմակերպելը: Անցումն կիսագնդերի քարտեղին և այդ քարտեղին ծանոթանալու առաջին քայլերը: Մեր ուսյոնի դիրքը գլոբուսի և կիսագնդերի քարտեղի վրա:

6. Բնություն յեվ կլիմա (2 ժամ). Ինչպես կազմակերպել յեղանակի դիտողությունները: Դիտողությունների գրանցումը և սրանց մշակումը: Վարժություններ տեղական նշաններով յեղանակը գուշակելու համար: Ինչպես մշակել այն հարցը, թե ինչպես և ազդում ուելիքը հողի միջում ջերմությունը բաշխելու վրա: Աշակերտների հետ աշխատանք այն հարցի մասին, թե ինչպես և բաշխվում ճյան ծածկույթը ուելիքի կապակցությամբ: Տվյալ վայրի կլիմայի բնութագրումը՝ դպրոցի յերկարամյա դիտողությունների հիման վրա: Այս դիտողությունների համեմատումը մերձակա ողերևույթաբանական կայանի դիտողությունների հետ: Դպրոցում ուղղի կազմակերպված ողերևույթաբանական դիտողությունների դաստիարակչական, գիտական և գործնական նշանակությունը:

7. Բնակչության կյանքի յեվ բնության պատկերներ ջերմական տարբեր գործներում (4 ժամ). Ոժանդակ պարագաներ այս նյութի տարբեր բաժինների ուսումնասիրության համար: Բարեխառն և տաք յերկրների բնության պատկերներ և սրանց ուսումնասիրության յեղանակները: Դիտապղիտիվներ, սրանց մեթոդական նշանակությունը և ոգտագործումը: Կինոպատկերների կիրառումը: Ուսուցչի պատմածը: Յերեխաների ակտիվությունը տվյալ բաժինների մշակման ժամանակ: Մանկական գեղարվեստական գրականության ոգտագործումը և յերեխաների տնտեսային ընթերցանության կազմակերպումը:

**IV. ՈՒՍՄԱՆ ԶՈՐՐՈՐԴ ՏԱՐՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ (8 ժամ)**

Ուսման չորրորդ տարվա՝ ԽՀՀՄ աշխարհագրության ծբառի մեթոդական առանձնահատկությունները:

ԽՍՀՄ աշխարհագրության տարրեր բաժինների ուսումնամիրության մեթոդական լեզանակները: Խնչպես տանել յերեխաների հետ ԽՍՀՄ տեսությունն ըստ զուանների: Քարտեզների նշանակությունն այս մշակման մեջ: Լաբորատոր աշխատանքներ դասարանական և կոնտուրային քարտեզների հիման վրա: Աշխարհագրական քարտեզներ և նրանց բացառիկ նշանակությունը ուսման չորրորդ տարրում:

Ույոնական աշխարհագրական կարինետներ. սրանց նշանակությունը և ոգտագործումը ԽՍՀՄ աշխարհագրության դասավանդման ժամանակ: Ստերեոսկոպիկ պատկերներ ու նրանց նշանակությունը և ոգտագործումը աշխարհագրության դասավանդման մեջ: Աշխարհագրության կինոֆիկացիան ուսման չորրորդ տարրում: Աշխարհագրական կոլեկցիաներ, նրանց նշանակությունը և ոգտագործումն աշխարհագրության դասերին:

Լրագրերի և հանդեսների (ժուրնալների) ոգտագործումը և աշխարհագրության ալբոմներ կազմելու և աշխատանքային նյութեր հավաքելու համար: Աշխարհագրական գրադարան և նրա նշանակությունը ուսման չորրորդ տարվա ծրագրի մշակման համար:

Տարրական դպրոցի աշխարհագրության գննական ոժանդակ պարագաների և ուսումնական գրականության մեթոդական գնահատումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. „На методическом фронте географии и экономической географии“. Сборник статей содружников Географо-экономического научно-исследовательского института при Ленинградском гос. университете. М.—Л., 1932 г., ц. 1 р. 25 коп.

Այս ժողովածում պարունակում են մի շարք հոդվածներ, վորոնք Մարքս-Լենինյան մեթոդոլոգիայի հիմունքներով քննարկում են տնտեսական և ֆիզիկական աշխարհագրության հիմնական, յելակետային պրոբլեմները, տալիս են նաև քննադատությունը Հետաքրյան դպրոցի, վորը մեծ ազդեցություն են ունեցել մեր աշխարհագրագետների և մեթոդիստների աշխատությունների վրա: Այս ժողովածվի ուսումնասիրությունը աշխարհագրության մեթոդիկայի ուսուցչին հնարավորություն կտաքննադատորեն վերաբերվելու այն ձեռնարկներին, վորոնք ույս են ընծայել մինչ հեղափոխությունը և վերջերս:

2. Гейки, Преподавание географии. Перевод английского Л. Д. Сичинского. ГИЗ. 1928 г.

Այս գրքում դաստիարակություն կատարված է արժեքավոր ցուցանքներ՝ տարրական դպրոցում աշխարհագրության դասավանդման դրվագի մասին:

3. Аржанов, Методика начального курса географии. ГИЗ. 1923 г.

Գետք են կատար ունենալ, վոր այս ձեռնարկի վրա ազդել են Հետներլան դպրոցը:

4. Терехова. Л. Т., География в начальной школе. ГИЗ. 1932 г.

5. Ильинский М. Б., Что должен знать по географии учитель начальной школы. ГИЗ. 1932 г.

6. „Вопросы географии в начальной школе“, под редакцией Буданова и Симонова.

7. Буданов, Записки по методике географии. Изд. 1913 г.

8. „География“—статья в Большой советской энциклопедии.

ԽՍՀՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԿԱՄԻՏԱԼԻԱՏԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ *)

ԽՍՀՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀՅՈՒՂԱԾԻՆ ՄԱՍԱԾ

I. ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (1 Ժամ)

ԽՍՀՄ Ժողովրդական տնտեսության կառուցվածքը: ԽՍՀՄ համեմատությունը ցարական նուսաստանի հետ: ԽՍՀՄ համեմատությունը կապիտալիստական խոշորագույն յերկրների հետ:

II. ԽՍՀՄ ԱՐԴՅՈՒՆԱՔԵՐՈՒԹՅՈՒՆԸ (7 Ժամ)

1. Արդյունաբերության ընդհանուր ընութաշիքը. Արդյունաբերության զարգացման բացառիկ արագ տեմպերը ԽՍՀՄ-ում: Համեմատությունը կապիտալիստական յերկրների հետ:

Արդյունաբերության նոր ճյուղերի ստեղծումը: Արդյունաբերության նոր ձեռնարկությունների չափերը, նրանց տեխնիկական մակարդակի բարձրությունը:

2. Եներգետիկա. Եներգետիկայի նշանակությունը ժողովրդական տնտեսության մեջ: ԽՍՀՄ եներգուեսուրսների չափերը մյուս յերկրների համեմատությամբ: Եներգուեսուրսների բաշխումը ԽՍՀՄ տերիտորիայում: Հիմնական քարածխային ավաղանները և նրանց բնութագրությունը: Նավթ, տորֆ, թերթաքարեր: Հիդրոէներգուեսուրսները: Ելեկտրոֆիկացիա: ԳՈԵԼՐՈՒՅՐ պլանը և նրա կատարումը:

3. Սև մետալուրգիա, Սև մետալուրգիայի նշանակությունը ժողովրդական տնտեսության մեջ:

*) Հայերեն թարգմանությունը խմբագրել են Հայր. Հովհաննեսիանը յեւ Քաջյանը:

Սև մետալուրգիայի գլխավոր ուայոնները. Հարավը, Կենաչընը, Արևելքը (Ուրալո—Կուզբաս): Յերկաթի նոր հանքավայրերը:

4. Գունավոր մետալուրգիա. Գունավոր մետալուրգիայի նշանակությունը: Պղնձի, ցինկի, կապարի, նիկելի և ալյումինի պաշարների տեղաբաշխումը և արդյունահանությունը:

5. Մեքենաշինություն. Մեքենաշինության նշանակությունը: Մեքենաշինության հիմնական ուայոնները. Մոսկվայի և Լենինգրադի մարզերը. Ուկրաինական ԽՍՀ և Աւրար:

6. Քիմիական արդյունաբերության հիմնական ձյուղերը և նրա նշանակությունը: Քիմիական արդյունաբերությունը ցարական նուսաստանում և այժմ: Քիմիական հումքը և նրա տեղաբաշխումը: Քիմիական արդյունաբերության հիմնական ուայոնները:

7. Անտառամագաման արդյունաբերության նշանակությունը: Անտառամագաման արդյունաբերության հիմնական արդյունաբերությունը ցարական նուսաստանում և այժմ: Անտառամագաման արդյունաբերությունը տեղաբաշխումը:

8. Տեքստիլ արդյունաբերություն. Տեքստիլ արդյունաբերության կազմը: Ճյուղեր՝ բամբակեղենի, վուշի, բրդի, մետաքսի և նրանց տեղաբաշխումը: Տրիկոտաժի և կարի արդյունաբերությունը և նրանց տեղաբաշխումը:

9. Սննդի արդյունաբերություն. Սննդարդյունաբերության կարևորագույն ճյուղերը և նրանց տեղաբաշխումը:

III. ԽՍՀՄ ԳՅՈՒՂԱՏՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ (4 Ժամ)

1. Գյուղատնտեսության ընդհանուր ընութաշիքը: ԽՍՀՄ գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը: Մանր և շատ մանր գյուղատնտեսական յերկրից ԽՍՀՄ վերածվելը աշխարհիս ամենախոշոր գյուղատնտեսական յերկրի: Գյուղատնտեսական տեխնիկական վերազինումը: Գյուղատնտեսության կարևորագույն ճյուղերը:

2. Հացահատիկայի հան տեսություն. Ցանքային ընդհանուր տարածությունը և հացահատիկների բերքահավաքը: Հացահատիկային կուլտուրաների և առանձնապես ցորենի առաջ-

խաղացումը դեպի հյուսիսը. Առանձին հացահատիկային կուլտուրաները՝ ցորեն, հաճար, վարսակ, գարի, յեղիպաշորեն, բրինձ և նրանց տեղաբաշխումը:

3. Տեխնիկան կուլտուրաները. Տեխնիկական կուլտուրաները և նրանց նշանակությունը թեթև և սննդի արդյունաբերության համար, թելատու կուլտուրաները՝ բամբակ, վուշ, կանեփ: Յուղատու կուլտուրաները՝ արևածաղիկ, սոյա: Բամբակի, վուշի, կանեփի սերմերի ողագործումը ձիթահան արդյունաբերության համար: Շաքարի ճակնդեղ. կարտոֆիլ: Այլ տեխնիկական կուլտուրաները՝ ծխախոտ, կառչուկաբերներ: Թեր:

4. Անասնապահություն. Անասնապահության զարգացումը ԽՍՀՄ-ում և նրա նշանակությունը ժողովրդական տնտեսության մեջ: Կերի բազայի ընդարձակումը ԽՍՀՄ զանազան մասերում: Անասնապահության մասնագիտացումն ըստ սալոնների:

5. Գյուղատնտեսության մյուս ճյուղերը. Վորոնցորդություն: ԽՍՀՄ մուշտակեղեն հարստությունները: Աղվամաղ կենդանիների հիմնական ռայոնները,

Զկնորսություն: ԽՍՀՄ ձկնային հարստությունները և ձկնորսության զարգացումը: Զկնարդունաբերական հիմնական ռայոնները: Զկնաբուծություն:

6. Գյուղատնտեսության մասնագիտացումն ըստ ռայոնների. Ռայոնական մասնագիտացման հասկացությունը: ԽՍՀՄ բաժանումը գյուղատնտեսական զոնաների:

IV. ՏՐԱՆՍՊՈՐՏ (3 ժամ)

Տրանսպորտի հիմնական տեսակները ԽՍՀՄ-ում և նրանց նշանակությունը:

1. Եերկաթուղարյին տրանսպորտ. Մեր յերկաթուղարյին ցանցի յերկարությունը: Հիմնական յերկաթուղարյին մագիստրալները և հիմնական բեռնահոսանքները: Եերկաթուղարյին նոր շինարարությունը:

2. Գետային տրանսպորտ. Գետային ճանապարհների յերկարությունը: Գետային տրանսպորտի առավելությունները յերկաթուղարյին տրանսպորտի համեմատությամբ: Վոլգա—Նես

սխտեմի, Հյուսիսային Դվինայի, Դնեպրի և Սիբիրի ու Հեռավոր Արևելքի գետերի բեռնահոսանքները: Գետային նավատորմի ուժեղացումը, գետային նավահանգիստների շինարարությունը:

3. Ծովային տրանսպորտը. Արտաքին ծովային բեռնաշրջանառությունը: Մեծ և փոքր կարոտած: Ծովերն ու նավահանգիստները: Ծովային նավատորմի զարգացումը ԽՍՀՄ-ում:

4. Ավտոճանապարհային տրանսպորտ. Ավտոճանապարհային տրանսպորտի զարգացումը ԽՍՀՄ-ում: Անունուածական սպորտի նշանակությունը: Նոր տրականներ: Ավտոմոբիլային պարկի աճումը:

5. Ավիոտրանսպորտ. Ավիոտրանսպորտի զարգացումը և նշանակությունը ԽՍՀՄ-ում: Ավիոգծերի ցանցը:

ՌԱՅՈՒՆԱԿԱՆ ՄԱՍԻՆ

I. ԽՍՀՄ ՌԱՅՈՒՆԱՅՑՈՒՄԸ (1 ժամ)

Ցարական Ռուսաստանի տերիտորիալ բաժանումը նահանգների, գավառների, գավառակների և նրա լիակատար անպետքությունը խորհրդային պայմաններում:

Խորհրդային իշխանության աղդային քաղաքականությունը և աղդային միութենական հանրապետությունների, ավտոնոմ հանրապետությունների և ավտոնոմ մարզերի կազմակերպումը:

Պլանային տնտեսությունը և տնտեսական ռայոնացումը:

II. ՎՈԶ ՍԵՎԱՀՈՂԱՅԻՆ ՅԵՎ ՍԵՎԱՀՈՂԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԸ

III. ՎՈԶ ՍԵՎԱՀՈՂԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԸ (5 ժամ)

ՄԱՍԻԿՎԱՅԻ ՄԱՐզը

Բնական պայմանները. Մարզի յերկու զոնաները՝ Ոկայից գեղի իհյուսիս և հարավ: Գետերը: Հողերն ու կլիման: Ոգտակար հանածոները՝ Մերձմուկովյան քարածուխը, տորֆը, յերկաթը (Տուլայի մոտ), Փոսֆորիտներ (Վուկրեսենսկի մոտ), շինանյութեր: Անապոները:

Բնակչությունը. Բնակչության խտության բաշխումը:

Տնտեսությունը. Արդյունաբերության տեսակարար կշիռ Մոսկվայի մարզի ժողովրդական տնտեսության մեջ: Արդյունաբերության գլխավոր ճյուղերը՝ մեքենաշինական, քիմիական և տեքստիլ: Մրանցից յուրաքանչյուրի տեղաբաշխումը: Նոր արագությունների լուրացումը: Մանր արդյունաբերությունը,

Նրա հիմնական ձյուղերը և ռայոնները: Վառելանյութերի բարձրացը և նրա փոփոխությունը վերջին տարիներում: Ելեկտրիֆիկացիան:

Գյուղատնտեսության կառուցվածքը, գյուղատնտեսության հիմնական գոնաները:

Հաղորդակցության ճանապարհները՝ յերկաթուղային և ջրային: Մուկվան վորպես խոշորագույն յերկաթուղային հանգույց:

Քաղաքները՝ Մուկվա, Տուլա, Ռյազան, Որեխովո-Զույեվո, Մտավոնդորսկ:

Խվանովյան յեվ Յարուլավի մարզերը

Բնական պայմանները. Կյազմա, Ոկա, Վոլգա գետերի միջև ընկած մարզերի աշխարհագրական գիրքը: Հողերն ու կլիման: Գյուղատնտեսության պայմանների գնահատությունը: Ագրակար հանածոները՝ տորֆ, փոսֆորիտներ, շինայինութեր: Անտառները, Վոլգայի նշանակությունը:

Խվանովյան մարզը

Տեքստիլ արդյունաբերությունը. Այն ճյուղերը, վորոնք առաջացել են տեքստիլ արդյունաբերությանն սպասարկելու հահամար՝ ոսլածորային, քիմիական, տեքստիլ մեքենաշինություն: Ելեկտրիֆիկացիայի շնորհիվ առաջացած ճյուղերը՝ տորֆամշակում, տորֆամեքենաշինություն, եքսկավատորներ: Տեղական հումքով աշխատող ճյուղերը՝ ապակու, փայտաղոցական:

Մարզի արդյունաբերության հետ չկապված ճյուղերը՝ գունավոր մետաղներ (Կոլչուգինո): Մյուս ճյուղերը. Արդյունաբերության ավելի հավասարաչափ տեղաբաշխումը, քան թե Յարուլավի մարզում:

Գյուղատնտեսությունը՝ վուշակաթնատնտեսական ուղղությունը հյուսիսում, հացանատիկային-կարտոֆիլի այգեգործական՝ հարավում:

Քաղաքները՝ Խվանովյան, Վլադիմիր:

Յարուլավի մարզը

Ինդուստրիալ հիմնական կենտրոնները՝ Յարոսլավլ և Ռիբինսկ: Նրանց աշխարհագրական դիրքի հարմարությունն արդյունաբերության խոշոր ճյուղեր կենտրոնացնելու համար: Արդյունաբերության հին և նոր ճյուղերը և նրանց փոխադարձական:

Գյուղատնտեսություն՝ կաթնատնտեսականը հյուսիսում սերմանաբուծականը Մոլոգա և Շեկոնա գետերի միջև, բանջարանոցային-կաթնատնտեսական հարավում: Աջափուլ և ձախ ափը:

Իվանովյանի և Յարոսլավլի մարզերի տրանսպորտը:
Քաղաքները՝ Յարոսլավլ, Ռիբինսկ, Կոստրոմա:
Բ. Սեմանովյանը կենտրոնը (Կուրսկի և Վորոնեժի մարզերը):

Ընդհանուր ներածություն

Բնական պայմանները. Միջին-ոռուսական բարձրությունը և Ոկա-Դոնյան հարթությունը: Չորերի խիստ տարածված լինելը: Կլիման: Տեղումների նվազումը հյուսիսարևմուտքից դեպի հարավ արևելք: Ոգտակար հանածոները՝ յերկաթ, փոսֆորիտներ, շինանյութեր, տորֆ:

Կուրսկի մարզը

Տնտեսությունը. Այն հիմնական փոփոխությունները, վոր հեղափոխությունը մացրել և մարզի գյուղատնտեսության մեջ: Գյուղատնտեսական կուլտուրաները և նրանց տեղաբաշխումը:

Գյուղատնտեսական արդյունաբերություն: Արդյունաբերության մյուս ճյուղերը:

Քաղաքները՝ Կուրսկ, Որով:

Վորոնեժի մարզը

Տնտեսությունը. Այն փոփոխությունները, վոր հեղափոխությունը մացրել և մարզի գյուղատնտեսության մեջ: Գյուղատնտեսական կուլտուրաները և նրանց տեղաբաշխումը:

Գյուղատնտեսական արդյունաբերությունը: Արդյունաբերության մյուս ճյուղերը: Սև մետաղուրդիան (Լիպեցկում), արանսպորտային մեքենաշինությունը (Վորոնեժում), մահուգի գործարանները:

Քաղաքները՝ Վորոնեժ, Լիպեցկ, Տամբով, Միջուրինսկ

III. ԽՍՀՄ ՅԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԱՍԻ ՀՅՈՒՍԻՍԸ (ԼԵՆԻՆ-ԳՐԱԴԻ ՄԱՐԶԸ, ԿԱՐԵԼՅԱՆ ԱԽՍՀ, ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ
ՄԱՐԶԸ, ԿՈՄԻ ԱԽՍՀ (2 Ժամ)

ԼԵՆԻՆԳՐԱԴԻ ՄԱՐԶԸ

ա. ՀԱՐԱՎԱՅԻ ԱԽՍԱՔ

Բնական պայմանները, Բնական աննպաստ պայմանները գուղատնտեսության համար: Անտառները, ճահիճները: Պողոլային հողերը: Կլիման:

Ողջակար հանածոները՝ տորֆ, գորշ քարածուխ, թերթաքարեր, բոքսիդներ, լեռկաթ, շինանյութեր:

Ներքին ջրի պիտանիությունը նավազնացության և եներդետիկայի համար:

Լենինգրադը վորպես խողորագույն նավահանգիստ ծովալին և գետալին ձանապարհների հանգույցում:

Բնակչությունը. Բնակչության խտության բաշխումը:

Տնտեսությունը. Լենինգրադի արդյունաբերության կառուցվածքը: Արդյունաբերության՝ լենինգրադում խիստ համակենտրոնանալու պատճառները: Լենինգրադի գերն առաջավոր տեխնիկան յուրացնելու ասպարեզում: Եներգետիկան և ելեկտրոֆիկացիան: Լենինգրադը վորպես խողորագույն արդյունաբերական, տրանսպորտային, կուլտուրական-գիտական կենտրոն՝ բարձր զարգացած պրոլետարիատով:

Լենինգրադի մոտ գտնվող տեղական հումքով աշխատող արդյունաբերական ձյուղերի զարգացումը:

Դյուղատնտեսության հիմնական ձյուղերը և նրանց տեղաբաշխումը: Զոնաները՝ մերձքաղաքային, վուշի, անտառային, Անտառային տնտեսությունը:

Բ. ՄԱՐԱՑԱԿԻ ԾՐՉԱՆՔ

Ընդհանուր համառոտ բնութագրությունը: Կոլա թերակղու տունդրաները: Գետերը, լճերը, կլիման: Խիբինյան լեռ: Հանածոներ՝ ապատիտներ, յերկաթ: Բնակչություն: Արդյունաբերությունը՝ քիմիական: Զենորսությունը:

Բաղադրները՝ լենինգրադ, նովգորոդ Պոկով, Բորովիչէ Վոլխովիկ, Մուրմանսկ, Կիրովսկ:

ԿՈՐԵԼՅԱՆ ԱԽՍՀ

Գրանիտի, լճերի և անտառների յերկիրը: Գետերի նշանակությունը, Հողակլիմայական պայմանները գյուղատնտեսության համար: Ոգտակար հանածոները: Բնակչությունը: Կարելայի գրությունը ցարական Ռուսաստանի կազմում:

Տնտեսության զարգացումը ներկայումս:

Սպիտակ-Բալթիկ ծովան ջրանցքը:

Բաղադրները՝ Պետրոպավոդսկ:

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՄԱՐԶԸ ՅԵՎ ԿՈՄԻ ԱԽՍՀ

Բնական պայմանները. Անտառներն ու գետերը: Վարելանողերը մարզի հարավ արևմուտքում: Վողովող մարգագետինները: Կլիման: Ոգտակար հանածոները՝ Պեչորայի քարածուխը, Ուխտայի նավթը:

Բնակչությունը. Բնակչության խտությունը և ազգագրական կազմը:

Տնտեսությունը. Հիմնական մասնագիտացումը՝ անտառանցութիւնը արտահանումը: Հյուսիսային մարզի նշանակությունը վորպես «Միության վալյուտային ցենտր»: Անտառային տնտեսության զարգացումն ու տեղաբաշխումը: Անտառամթերման և անտառապարտահանման աճումը: Դյուղատնտեսության հիմնական ձյուղերը և նրանց տեղաբաշխումը: Վուշաբուժություն, վորպորդություն և ձկնորսություն:

Բաղադրները. Արխանգելսկ, Վոլոգդա, Կոտլաս, Սիկտիվկար, Նարյան-Մար:

IV ԽՍՀՄ ՅԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԱՍԻ ԱՐԵՎՄՈՒՏՔԸ (ԲԵԼՈ-ՌՈՒՍԱԿԱՆ ԽՍՀ, ԱՐԵՎՄՏՅԱՆ ՄԱՐԶԸ ՅԵՎ ԿԱՂԻՆԻՆԻ ՄԱՐԶԸ (2 Ժամ)

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՄԱՐԶԸ

Բնական պայմանները. Միջին-ռուսական բարձրությունը, գետերը, հողերը և կլիման: Ոգտակար հանածոները՝ տորփ, փոսփորիտներ, շինանյութեր, գորշ քարածուխ և յերկաթահանք:

Բնակչությունը. Բնակչության խտության բաշխումը:

Տնտեսությունը. Դյուղատնտեսության մասնագիտացումը: Վուշաբուժություն, կանեփարուծություն և մսակաթ-

նատնտեսական անասնապահություն: Մետաղային արդյունաբերություն: (Բրյանսկ), վուշամշակություն, թղթեր, լուցկու, արդյունաբերություն:

Քաղաքները՝ Սմոլենսկ. Բրյանսկ:

ԿԱՂԻՆԻՆԻ ՄԱՐԶԸ

Բնական պայմանները. Մորենայի լանդշաֆտը: Լճերը, ձաշիձները, գետերը, անտառները և կլիման: Ոգտակար հանածոները՝ տորփ, շինանյութեր:

Բնակչությունը. Բնակչության խտության բաշխումը: Տնտեսությունը. Վուշաբուծությունը վորպես գյուղատնտեսության գլխավոր մասնագիտացումը: Կաթնանամապահությունը: Կարտոֆիլ և բանջարեղենները: Անտառամշակման, բամբակենի, վուշամշակման արդյունաբերությունը: Քաղաքները. Կալինին, Վիշնիչ-Վոլոչիկ, Կիմրի:

ԲԵԼՈՌՈՒԿԱՆԱՆ ԽՍՀ

Բնական պայմանները. Բելոռուսական-լիտվական բլրաշարը: Պոլեսյե: Պինսկի ձաշիձները: Հողերը, անտառները և կլիման: Ոգտակար հանածոները՝ տորփ, շինանյութեր և փորփորիներ:

Բնակչությունը. Բնակչության խտության բաշխումը. Ազգագրական կազմը:

Տնտեսությունը. Ճաշիձների չորացումը և ցանքային տարածությունների ընդարձակումը: Գյուղատնտեսության հիմնական տեսակները և նրանց տեղաբաշխումը: Կարտոֆիլ և խոզաբուծություն: Մյուս ձյուղերը՝ վուշաբուծություն, կանեփառություն, թուչնաբուծություն, ալյուրծություն. Անտառային տնտեսություն: Արդյունաբերության ուժեղ զարգացումը:

Սննդի և համի, փայտամշակման, վուշամանվածքային, կաշվի և շինանյութերի արդյունաբերություն:

Կուլտուրական շինարարություն:

Քաղաքներ՝ Մինսկ, Գոմել, Մոգիլ, Վիտեբսկ:

V. ՊՈՎՈՂՃՅԵ

(Գորկու մարզը, Զուգայան ԱԽՍՀ. Մարի-ների ԱԽՍՀ. Կիրովի մարզը, Ռոդովույան ԱԽՍՀ. Կույբերի շենքարությունը, Մորդվայի ԱԽՍՀ. Թաթար-

կան ԱԽՍՀ. Մարատովի մարզը, Պովոլժիեի գերմանացիների ԱԽՍՀ. Մատալինգրադի մարզը, Կալմիկա-յան ԱԽՍՀ (Յ ժամ):

ԳՈՐԿՈՒ ՄԱՐԶԸ, ԶՈՒՎՈԾՅԱՆ ԱԽՍՀ ՅԵՎ ՄԱՐԻՆԵՐԻ ԱԽՍՀ

Բնական պայմանները, հողերը և կլիման: Ոգտակար հանածոները՝ լեռնալիք, տորփ, փոսֆորիտներ, Դիբքը՝ Ուկայի և Վոլգայի խառնարանի մոտ:

Բնակչությունը. Բնակչության խտության բաշխումը:

Տնտեսությունը. Տնտեսության հիմնական տեսակները: Գորկին վորպես մարզի տրանսպորտային և արդյունաբերական կենտրոն: Մարզի արդյունաբերության հիմնական ձյուղերի կենտրոնացումը Գորկում՝ մետաղային, քիմիական փայտամշակման: Սորմովայի գործարանը: Ավտոմոբիլային գործարանը: Մերձոկյան մետալուրգիան: Անտառային գործը: Զերնուելնակի քիմիկոմբինատը: Մյուս ձյուղերը: Եներգետիկան: Տնայնագործական արդյունաբերություն: Գյուղատնտեսությունը: Տրանսպորտը:

Քաղաքներ՝ Գորկի, Մուրոմ, Պավլովսկ, Չերոկսարի, Յուգար-Ռու:

ԿԻՐՈՎԻ ՄԱՐԶԸ ՅԵՎ ՈՒԴՄՈՒՐՏՅԱՆ ԱԽՍՀ

Բնական պայմանները. Հողային — կլիմայական պայմանները գյուղատնտեսության համար: Անտառներն ու ձաշիձները: Գետերը: Ոգտակար հանածոները՝ տորփ, յերկաթ, փոսֆորիտներ, թերթաքարեր:

Բնակչությունը. Բնակչության խտության բաշխումը:

Տնտեսությունը. Մետաղային, անտառամշակման արդյունաբերությունը: Տնայնագործական զբաղմունքները: Գյուղատնտեսության մասնագիտացումը: Վուշաբուծություն և կաթնանապահություն:

Քաղաքներ՝ Կիրով, Ոմուտինսկ, Իժևսկ:

ԹԱԹԱՐԱԿԱՆ ԱԽՍՀ

Ընդհանուր բնութագրությունը. Յերեք մասերը՝ Վոլգայի աջ ափը, Կամայի աջ ափը, Կամայի ձախ ափը: Հողերը և կլիման: Գյուղատնտեսության առանձնահատկություն-

